Azg Վազ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 184 (3115)

Պուտինը պատշտպանում է Բուշին

Թեեւ Ռուսաստանի նախագահը վերջին շրջանում մի քանի առիթներով չի թաքցրել իր կողմնակցությունը Մ. Նահանգների նախագահ Ջորջ Բուշի վերընտրության հարցում, սակայն միջազգային դիտորդները երեկ անակնկալի եկան, երբ Վլադիմիր Պուտինն այնքան բացահայտորեն արտահայտվեց այդ մասին: «Նախագահ Բուշի չվերընտրվելը նշանակալից հաղթանակ կլինի Իրանում եւ այլուր գործող ահաբեկիչների համար», ասաց Ռուսաստանի նախագահը եւ ավելացրեց. «Միջազգային ահաբեկչական խմբավորումները ջանք են թափում արգելելու Ջորջ Բուշի վերընտրությունը»:

Այնուհետեւ, կարծես մեղմացնելու համար մերկապարանոց այս հայտարարության թողած տպավորությունը, Վլ. Պուտինն ասաց, որ ինքը դեմ է մնում Իրաքի դեմ ամերիկյան արշավանքին եւ խորապես հարգում է ամերիկացի ընտրողների կողմնորոշումը նախագահական ընտրությունների հարցում եւ հարգանքով էլ ընդունելու է քվեարկությունների ելքը՝ ո՛վ էլ որ կլինի ընտրվողը:

Դիտորդների կարծիքով, Ռուսաստանի նախագահի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Մոսկվան սովորաբար կողմնորոշված է հզգուս հանրապետականների, քանի որ դեմոկրատներն ավանդաբար շատ են միջամտում Ռուսաստանի ներքին գործերին մարդու իրավունքների հարցով:

Տեղի ունեցավ Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Խաչ եկեղեցու եւ առաջնորդարանի հիմնարկեքը

Հոկտեմբերի 15-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ Ռուսաստանի հայ համայնքի հետ նշելու Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի ծննդյան 75-ամյակը եւ կատարելու հիմնարկեքը Մոսկվայի Սուրբ Խաչ առաջնորդանիստ եկեղեցու եւ թեմի առաջնորդարանի: Վեհափառ հայրապետին ուղեկցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը եւ Տ. Մուշեղ աբղ. Բաբայանը՝ իբրեւ գավազանակիր: Մոսկվայի օդանավակայանում Վեհափառ հայրապետին դիմավորելու էին եկել Մոսկվայի եւ համայն Ռուսիո Ալեքսի Բ պատրիարքը՝ բարձրաստիճան հոգեւորականների ուղեկցությամբ, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը եւ թեմական խորհրդի անդամներ:

Հոկտեմբերի 16-ին, առավոտյան Նորին սրբությունը, առաջնորդ սրբազանի, եկեղեցականների եւ թեմական խորհրդի անդամների ուղեկցությամբ այցելեց Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցի, ուր կատարվեց գոհաբանական մաղթանք:

Տես էջ 3

ՄՈՍԿՎԱՆ ԿՐԿԻՆ ՀԱՅՏՍՐՍՐՈՒՄ Է

«Հարավային Կովկասում Ադրբեջանը Ռուսաստանի կարեւոր դաշնակիցն է»

Իլհամ Ալիեւը երկօրյա այցով Մոսկվայում

Ռուսաստանի ԱԳՆ պատշգնական ներկայացուցիչ Ալեքսանդր Յակովենկոն հայտարարել է, որ Հարավային Կովկասում Ադրբեջանը Ռուսաստանի կարեւոր դաշնակիցն է: «Մոսկվայում մեծ կարեւորություն են տալիս Ռուսաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների զարգացման դրական միտումներն ամրապնդելուն», ասել է Յակովենկոն:

Երեկ երկօրյա աշխատանքային այցով Մոսկվա է մեկնել Ադրբեջանի նախագահը: Իլհամ Ալիեւը կհանդիպի իր ռուս գործընկեր Վլադիմիր Պուտինի հետ: Բանակցություններում կքննարկվեն ահաբեկչության դեմ պայքարի, ռուս-ադրբեջանական առեւտրաշնչական փոխհարաբերությունների, Կասպիցի իրավական կարգավիճակի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցեր:

«Ռուսաստանը ողջունում է տարբեր մակարդակներում շարունակվող ադրբեջան-հայկական երկխոսությունը», ասել է Յակովենկոն եւ հավելել, որ հակամարտող կողմերն իրենք պետք է հասնեն ղարաբաղյան կարգավորման փոխընդունելի որոշման: «Ռուսաստանը պատրաստ է այդ հարցում իր ակտիվ օժանդակությունը ցուցաբերել ինչպես երկկողմ հենքով, այնպես էլ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող եւ երաշխավորի դեր խաղալ ձեռք բերված պայմանավորվածություններում»:

Յակովենկոն նշել է, որ բանակցություններում հատուկ ուշադրության է արժանանալու երկու երկրների՝ հակաահաբեկչական գործողություններ համակարգելու հարցը: Հիշեցնենք, որ Բեսլանի ահաբեկչությունից հետո Ռուսաստանը մասնակիորեն փակել էր Վրաստանի եւ Ադրբեջանի հետ իր սահմանային անցակետերը: Մի քանի օր առաջ Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավար Նիկոլայ Պատրուշեւը Բաքվին եւ Թբիլիսիին մեղադրել էր, որ կովկասյան երկու երկրները բավարար չափով պայքար չեն տանում, եւ վարձկաններն ու միջազգային ահաբեկիչները Չեչնիա եւ Հյուսիսային Կովկաս են ներթափանցում՝ օգտագործելով Վրաստանի եւ Ադրբեջանի տարածքը:

Դեռեւս շաբաթվա սկզբին էր մամուլում հայտնվել, որ Ռուսաստան եւ Ադրբեջան ելումուտի թույլտվություն է տրվում միայն հայրենիք վերադարձող քաղաքացիներին:

Պատարագի լեզուն կմնա անփոփոխ

Ամերիկայի արեւելյան թեմի հայոց եկեղեցիներում հաստատես վերջին տարին շրջանառու էր դարձել եկեղեցիներում Սբ. պատարագի լեզուն գրաբարից անգլերենի վերափոխելը:

ՈԱԿ մամլո դիվանից հայտնում են, որ Ամենայն հայոց հայրապետի՝ հոգեւորական տարեկան համագումարին ուղղված հորդորին անսալով՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշել է Հայաստանյայց եկեղեցու Սբ. պատարագի լեզուն չփոխել եւ հավատարիմ մնալ «մատեցյան ոսկեղենիկ մեր լեզվին»՝ գրաբարին:

Ամերիկայի արեւելյան թեմի հոգեւորականներից խառսուն հոգի այդ մասին գրավոր հայտնել են Արեւելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանին, որ իրենք «որդիական ակնածանքով հնազանդվում են Վեհափառ հայրապետի հորդորին, Գերագույն հոգեւոր խորհրդի որոշմանը եւ առաջնորդ Սրբազան հոր շրջաբերական-հրահանգներին»:

Մ. Ռ.

Մելգոնյանի հարցը՝ Կիպրոս-Հայաստան խոսակցություններում

Երկօրյա պատշգնական այցով Հայաստանում գտնվող Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Դեմետրիոս Խրիստոֆիասի եւ ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի երեկ կայացած առանձնազրույցում երկուստեք փաստվել է, որ երկու երկրների միջեւ ձեւավորվում է ռազմավարական համագործակցություն, չկան տարաձայնություններ եւ առկա է մեծ եւ դեռ լիովին չօգտագործված ներուժ: Առանձնազրույցի ընթացքում կարեւորվել է միջազգային կառույցներում համագործակցության շարունակումը եւ Կիպրոսի՝ իբրեւ ԵՄ անդամի աջակցությունը Հայաստանին: Նաեւ մտահոգություն է արտահայտվել Կիպրոսի Մելգոնյան վարժարանի ճակատագրի վերաբերյալ եւ նշվել, որ Կիպրոսի կառավարությունը հայլեր է ձեռնարկում կրթահամալիրի պահպանության նպատակով:

Ն. Պ.

Հասարակածային Գվինեայում մալարիան միջամտում է դասին

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հասարակածային Գվինեայում պետական հեղաշրջում նախապատրաստելու մեջ մեղադրվող 19 ամբաստանյալների, այդ թվում վեց հայ օդաչուների դատավարությունը հետաձգվել է, այն նախատեսվում է վերսկսել ամսվա վերջին: Բանն այն է, որ անցած հինգշաբթի օրը մալարիայից մահացել է պետական հեղաշրջման մեջ մեղադրվող հարավաֆրիկացիների 62-ամյա փաստաբանը:

Ինչպես հայտնեցին ՀՀ ԱԳՆ-ի մամուլի բաժնից, դատաքննությունը հետաձգվել է, քանի որ հրավիրած նոր փաստաբանին ժամանակ է պետք գործի նյութերին ծանոթանալու համար:

ՀԱՄԱՌՈՏ

Ջրմուղը մեկ տարի անց էլ հրաժարվում է վճարել փոխհատուցումը

Հոկտեմբերի 26-ին լրանում է Արաքսիի խմելու ջրի աղտոտման պատմության 1 տարին: Այս «տարելիցը» չէինք հիշի, եթե սպասարկող ու մեղադրվող կողմ ջրմուղը չարտահայտեր իր արտասովոր համառությամբ: Մինչ օրս նա շարունակում է բողոքարկել սպառողների հայցադիմումները, որոնք դատարանն ադեն իսկ բավարարել է: Սեպտեմբերի 30-ին նա բողոքարկել է, օրինակ, Գոհար Բազինյանին 59 հզ. դրամով փոխհատուցելու առաջին ատյանի դատարանի որոշումը: Իր համարատասխան հաշվարկով նա «հիմնավորել» է, որ երեխայի հետ հիվանդանոցում հայտնված սպառողին 1000 դրամ փոխհատուցելն էլ բավական է: Այն էլ 1000 դրամի սահմաններում անվճար ջուր: Սա միակ դեպքն էր, երբ սպառողի պահանջած փոխհատուցման չափը դատարանը համարատասխան վճռով բավարարել է ամբողջությամբ, ոչ թե մասնակի:

Երեւանի տրանսպորտային անհամամասնությունները

Անցած տարվա համեմատ Երեւանում միկրոավտոբուսների քանակը 600-ով ավելացել է, ունենք 3200 միկրոավտոբուս: Այս տարի աճխուժացել է նաեւ տոլեյբուսներով սպասարկումը: Մայրաքաղաքի 55 տոլեյբուսներին ավելացել է եւս 10-ը: Բացվել են թիվ 3 եւ 18 երթուղիները: 200 տոկոսով ավելացել են տոլեյբուսներով սպասարկման բոլոր ցուցանիշները՝ ծախսերի նվազման եւ եկամուտների առումով: Եթե անցած տարի տանց եկամտի գործակիցը 22,5 էր, հիմա՝ 34,9: Հիշենք, որ ավտոբուսների համեմատ տոլեյբուսները հասատագրված վճարներ չեն մուծում:

Երեւանում աշխատում է 120 ավտոբուս, տրամվայ չկա:

Կ. Դ.

«Երանի ամեն մի էթնիկ խումբ այնքան հավատարիմ լիներ իր ծագմանը, որքան հրեաները»

Ասում է ափյուռֆահայ մտավորական Երվանդ Ազատյանը

Ափյուռֆահայ մտավորական, ՈԱԿ կենտրոնական վարչության համատեղնախագահ Երվանդ Ազատյանը մեր խմբագրության թերեւս ամենահաճելի հյուրերից է: Նա հարցազրույցներով ուշագրավ տեղեկություններ է տալիս ԱՄՆ-ի տարածաշրջանային հաղթականության, երկրում Հայաստանի նկատմամբ առկա դիրքորոշումների, Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնությունների եւ բազմաթիվ այլ հարցերի մասին: Պրն Ազատյանի հետ այս հարցազրույցում անդրադարձանք ԱՄՆ-ի առաջիկա նախագահական ընտրություններին՝ գնահատելու թեկնածուներից Ջոն Քերիի հաղթելու, հաղթանակի դեպքում հայերին տված խոստումը կատարելու հավանականությունը:

- Դուք Հայաստան եք ժամանել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության համատեղ ջանքերով հրավիրած Հայկական միջազգային տնտեսական ֆորումի աշխատանքներին մասնակցելու առաքելությամբ: Ինչպիսի՞ն է Ձեր տպավորությունը Ֆորումի աշխատանքներից:

- Ես Հայաստան եմ եկել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի անմիջական մասնակցությամբ Երեւանում կազմակերպված միջոցառմանը մասնակցելու համար: Թեեւ ինքս գործարար չեմ, սակայն ինձ Ֆորումին հիմնադիր կազմում նախագահության անդամ էին ընտրել: ՀՀԿ-ն մեծ ճիգեր է գործադրում թե՛ Ռուսաստանի հայերին կազմակերպելու եւ թե՛ սփյուռքի հայության ներուժն ու միջոցները դեպի Հայաստան ուղղորդելու համար: Գաղափարն ինձ համար չափազանց հոգեհարազատ է: Միջոցառմանը մասնակցում էին բազմաթիվ գործարարներ եւ նախարարներ Ռուսաստանից, Սլովակիայից, Ուկրաինայից, ինչպես նաեւ Հարավային Կորեայի դեսպանը: Այնպես որ, Ֆորումն սկսվեց շատ դրական մթնոլորտում, կարծում եմ, մոտ ապագայում կտա իր արդյունքները: Գործարար չլինելու պատճառով զերծ եմ մնում ներկայացված տնտեսական ծրագրերի գնահատականներից, բայց Ֆորումի աշխատանքները մեծ տպավորություն են գործել ինձ վրա:

Տես էջ 4

ԱԶԳ

Ընթացիկ

Երեք երեխայի եւ մեկ կնոջ հաջողվել է դուրս բերել Էրգնեթիից

Հարավային Օսիայում «գերեվարված» հայերն օգնության խնդրանքով դիմել են Կոֆի Անանին, Հայաստանի եւ Վրաստանի նախագահներին

Վրաց-հարավօսական սահմանում, Հարավային Օսիայի տարածքում անելանելի վիճակում հայտնված Հայաստանի մի քանի տասնյակ քաղաքացիներ օգնության խնդրանքով դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանին, ԵԱՀԿ գործող նախագահ Սոլոմոն Պասիին, Հայաստանի եւ Վրաստանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանին ու Միխայիլ Սաակաշվիլուն:

«Մենք՝ Հայաստանի 60 քաղաքացիներ, որից 12-ը՝ երեխաներ, Ռուսաստանից Հայաստան վերադարձի ճանապարհին հայտնվել ենք ծայրահեղ ծանր վիճակում եւ օգնություն ենք խնդրում: Էրգնեթի բնակավայրում ոստիկանական կեցի աշխատակիցները չեն թույլատրում մեզ շարունակել ճանապարհը: Մենք ստիպված ենք աղրել ավտոբուսի մեջ՝ մի քանի շաբաթ զրկված լինելով մարդկային պայմաններից: Դիմում ենք Ձեզ օգնության խնդրանքով: Վրաստանի իշխանություններից խնդրում ենք, որ թույլ տան մեր ավտոշարասյանը՝ 2 ավտոբուս եւ 5 բեռնատարներ, շարունակել ճանապարհը: Ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել, որ Վրաստանում Հայաստանի դեսպանության եւ Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի սպասավորների ջանքերը հաջողությամբ չեն ավարտվել: Կրկին խնդրում ենք՝ օգնեք մեզ», ասվում է դիմումի մեջ:

Վրաստանում Հայաստանի դեսպան Գեորգի Խոստերը «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց, որ շաբաթ օրը դեսպանության աշխատակիցները երկրորդ անգամ են մեկնել Էրգնեթի եւ ծանր վիճակում հայտնված Հայաստանի քաղաքացիներին տարել տաք ծածկոցներ, դեղորայք: Դեսպան Խոստերն ասաց, որ դեսպանությանն աջակցել են բեռնափոխադրումներ իրականացնող «Աղավեն» ընկերությունը եւ վիրահայոց թեմը:

Էրգնեթին վրաց-հարավօսական սահմանին է, այնտեղ հաճախ են լսվում կրակոցներ վրացական եւ հարավօսական զինուժի միջեւ: Պաշտոնական Թբիլիսին ռուս-վրացական սահմանի հարավօսական հատվածում քաղաքացիական անձանց եւ ավտոմեքենաների ելումուտը համարում է անօրինական: Հարավային Օսիան փաստացի գտնվում է Ռուսաստանի վերահսկողության տակ: Քանի որ ռուս-վրացական սահմանի Վերին Լարս օրինական անցակետը շարունակում է փակ մնալ, Ռուսաստանից հայերը Հայաստան հասնելու համար ընտրում են չճանաչված Հարավային Օսիայի տարածքը: Ներին Զամարագ-Ցխինվալ-Էրգնեթի ճանապարհից օգտվում են հիմնականում այն հայերը, ովքեր Հայաստան վերադառնալու համար հնարավորություն չունեն օգտվելու օդանավից, ինչպես նաեւ Ռուսաստանից արտախվածները:

Վրաստանում Հայաստանի դեսպանությունը շարունակում է Թբիլիսիի իշխանությունների հետ բանակցությունները, որպեսզի հնարավոր լինի Հարավային Օսիայում անօթեւան մնացած հայերին տեղափոխել Հայաստան: Շաբաթ օրը հաջողվել է հայերից չորսին՝ երեք երեխայի եւ մեկ կնոջ հանել չճանաչված հանրապետության տարածքից եւ ճանապարհել Հայաստան: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 22-24-ը Վրաստան է այցելելու Ռոբերտ Քոչարյանը: Միգուցե Հայաստանի նախագահի այցի նախօրեին Վրաստանի իշխանությունները թույլ կտան մի քանի տասնյակ հայերին հատել վրացական սահմանը եւ հասնել Հայաստան:

Շարունակում է փակ մնալ վրաց-ռուսական սահմանի Վերին Լարս անցակետը: Հիշեցնենք, որ 40 օր փակ մնալուց հետո այն բացվել էր հոկտեմբերի 10-ին՝ ընդամենը մեկ օրով: Ռուսական եւ հայկական որոշ լրատվամիջոցներ շաբաթ եւ կիրակի օրերին հաղորդեցին, թե Վերին Լարսը գործում է, ինչը չի համապատասխանում իրականությանը: Վրաստանի «Հյուսիսային» մաքսատան ղեկավար Կախա Միքելաձեն «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց, որ հոկտեմբերի 10-ից հետո սահմանը չի բացվել ոչ ռուսական եւ ոչ էլ վրացական կողմերից:

Ռուսական լրատվամիջոցները հաղորդում են, որ սահմանի ռուսական հատվածում կուտակումներն ավելանում են: Մասնավորապես, դրանց մեջ են ՌԴ պաշտպանության նախարարության մի քանի տասնյակ բեռնատարներ, որոնք անհրաժեշտ ապրանքներ են տեղափոխում Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայան:

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Տպառողը խաբվում է՝ կրկին

Նորություն չենք ասելու, պարզապես սպառող-արտադրող-վաճառող հարաբերությունների եւ սպառողի հերթական խաբվածության մասին է խոսքը: Այս անգամ այն ուղղենք ինչ-որ էյաբաբի ֆարշ կոչված զանգված արտադրողին: Ապրանքի տուփի վրա նշված հասցեն (Դավիթաշեն 4 փող. 9 տուն) վստահություն է առաջացնում, վաճառողներից՝ մանրամասն հարցուփորձից սացած դրական խորհուրդը եւ: Եվ միայն գնելուց հետո զանգվածի հոտը եւ գույնը հուշում են պարունակության որակը:

Հարց արտադրողին՝ եթե ունի սննդարտադրության համապատասխան իրավունք (պարզվում է՝ ունի) եւ եթե պահպանում է սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմանները, ինչպե՞ս է մթերքը ձեռք բերում նման գույն ու հոտ, որից ենթադրելի է, որ տուփի վրա նշված մթերքները (թարմ խոզի ու տավարի միս) այդ սննդատեսակի բաղադրությունից դուրս են մնացել: Թե ինչից են պատրաստում, իրենք մեզնից լավ գիտեն: (Գուցե նախատեսված է կենդանիների համար, պարզապես վաճառողները մեզ տեղյակ չեն պահում): Սննդատեսակը սառեցրած վիճակում արտադրողն ինքն է մատակարարում խանութներ: Տուփի վրա նշված է բաղադրությունը եւ պահպանման պայմանները (-8-10 աստիճան), սակայն արտադրելու ժամկետը նշված չէ: Խանութում 2 օր սառցարանում պահվելով դժվար թե գույնն այդպես փոխվեր: Վաճառողը դժգոհ էր ապրանքի ժամկետը չնշվելուց, թեեւ ակնարկեց, որ դա էլ կարելի է կեղծել, որովհետեւ կնիքն իրենց ձեռքում է:

Սա առաջին դեպքը չէ, երբ սնունդը փաթեթազերծվելուց հետո երեւում է իր բորբոսնած, չորացած տեսքով, հատկապես աղացած մսամթերքները (կոտլետ, երշիկ, նրբերշիկ, վիսչինա եւ այլն), փաթեթած պանրիկները ու կոնֆետները: (Տեսնես ե՞րբ է հայ արտադրողը պարկեշտություն ձեռք բերելու, վերջապես այդ արտադրանքն իր համաքաղաքացիներն են գնում):

Արտադրամաս զանգելուց հետո պարզվեց, որ սպառողն է սխալվում, որ դա առաջին դեպքն է բողոքի, որ սնունդը պատրաստվում է հատուկ տեխնոլոգիայով, եւ կարող ենք լաբորատոր ստուգման ներկայացնել, եւ որ շատ արագ է սպառվում, գուցե խանութում երկար մնացել ու հնացել է, եւ վերջապես եթե չենք ուզում, ուրիշը կարող ենք գնել: Թե՝ «ինչ միս ես օգտագործում» հարցին հետեւեց կտրուկ պատասխանը՝ վռան գրված է՝ պատրաստված է տավարի թարմ մսից: Մեկ անգամ խաբվելուց հետո, բնականաբար, այլեւս չենք գնի, բայց կարունակենք զգուշացնել մեր համաքաղաքացիներին չվատնել իրենց առողջությունը եւ չվատնել դրամը՝ գնելով չփորձված ու անհայտ բաղադրությամբ նման խառնասնունդ, նաեւ խնդրել մեր սպառողներին այդպիսի դեպքերում դիմել խմբագրություն՝ ներկայացնելով ապրանքաթիսակը կամ նմուշը:

Հարկ ենք համարում նաեւ նշել, որ խանութը պատասխանատու հետ վերցրեց մթերքը՝ դրամը վերադարձնելով տուժողներին, իսկ ապրանքը՝ արտադրողին:

Մ. Ք.

Զոհանչ-փեսա վեճը բարդացավ

Հոկտեմբերի 15-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության աշխատակիցները ծառայություն կատարելիս, Վարդանանց եւ Խանջյան փողոցների խաչմերուկում զոհանչի՝ Օֆելյա Խ.-ի հետ վիճաբանելու համար բերման են ենթարկել 1969 թ. ծնված Գարեգին Ե.-ին, որը ճանապարհին իր գրպանից հանել է ցած նետել անձեռոցիկով փաթաթված մարիխուանա թմրանյութի զանգված, որն էլ առգրավված է: Կատարվում է հետաքննություն:

Ռադիոակտիվ նյութեր թաքցնողը ձերբակալվել է

Ինչպես տեղեկացանք ՀՀ ԱԱ ծառայության մամուլի կենտրոնի տրամադրած օպերատիվ տեղեկագրից, ազգային անվտանգության ծառայության մարմնի իրականացրած օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 15-ին ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության մեղադրանքով ձերբակալվել է Երեւան քաղաքի բնակիչ, 1959 թ. ծնված Գագիկ Թովմասյանը: Նրա մեքենայի բեռնախցիկում հայտնաբերվել եւ առգրավվել է ցեզիում-137 տեսակի ռադիոակտիվ նյութ, որը շատ արագ տարածվում եւ վնաս է հասցնում մարդկանց առողջությանը՝ առաջացնելով արյան ծանր հիվանդություններ: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 233 հոդվածի հատկանիշներով: Նախաքննությունը վարում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը:

Մ. Մ.

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

Հակված ենք մերձենալու ո՞ւմ հետ

«Ընտրական համակարգեր» կենտրոնի Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրության կենտրոնը սեպտեմբերի 20-30-ը անցկացրել է ծավալուն հետազոտություն: Ընտրանքը եռաստիճան է, ներկայացուցչական ըստ տարիքասեռային հատկանիշների: Ընտրանքի ծավալը՝ 1095 մարդ: Ընդհանուր մեթոդաբանությամբ համարժեք հետազոտություններ են իրականացվել Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում եւ Ղազախստանում: Ներկայացնում ենք Հայաստանում անցկացված հետազոտության 2-րդ մասը:

Հարցերի այս խումբը Ռուսաստանի կամ Արեւմուտքի հետ հնարավոր մերձեցման նկատմամբ բնակչության վերաբերմունքի մասին է:

Բնակչության վերաբերմունքն արտաքին ինտեգրացիայի նկատմամբ

Նախընտրելի է, որ Հայաստանը ղեկավարեն այլ քաղաքական գործիչներ, որոնք Հայաստանի արտաքին ինտեգրացիայի հարցում կողմնորոշված են մերձենալու

- բացառապես Ռուսաստանի հետ՝ 14%
- ավելի շատ Ռուսաստանի, քան Արեւմուտքի հետ՝ 19%
- հավասարապես Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ՝ 26%
- ավելի շատ Արեւմուտքի, քան Ռուսաստանի հետ՝ 18%
- բացառապես Արեւմուտքի հետ՝ 14%
- ոչ Ռուսաստանի, ոչ Արեւմուտքի հետ՝ 2%
- դժվարանում եմ պատասխանել՝ 7%

Ըստ ձեզ նախընտրելի՞ է, որ Հայաստանն արտաքին ռազմական ինտեգրացիայի հարցում կողմնորոշված լինի մերձենալու

- բացառապես Ռուսաստանի հետ՝ 18%
- ավելի շատ Ռուսաստանի, քան ՆԱՏՕ-ի հետ՝ 20%
- հավասարապես Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի հետ՝ 29%
- ավելի շատ ՆԱՏՕ-ի, քան Ռուսաստանի հետ՝ 21%
- բացառապես ՆԱՏՕ-ի հետ՝ 8%
- ոչ Ռուսաստանի, ոչ ՆԱՏՕ-ի հետ՝ 1%
- դժվարանում եմ պատասխանել՝ 3%

Երկրների ո՞ր խմբում գտնվելն է նախընտրելի մեր երկրի համար

- Անկասկած Եվրամիությունում՝ 35%
- Ավելի շատ Եվրամիությունում՝ 37%
- Ավելի շատ ԱՊՀ-ում՝ 13%
- Անկասկած ԱՊՀ-ում՝ 13%
- Դժվարանում եմ պատասխանել՝ 2%

«Գրանդ հոլդինգը» «Ար» հեռուստաընկերությունը որեւէ մեկին չի փոխանցում

Թեպետ «Ար» հեռուստաընկերության էկրանին զետեղված հաղորդագրությունն ասում է, որ տեխնիկական անսարքության ու հետագա վերազինման նպատակով դադարեցրել է հեռարձակումը, սակայն որոշ լրատվամիջոցներ արագորեն տարածեցին իրենց ունեցած տեղեկությունը, համաձայն որի «Գրանդ հոլդինգի» ղեկավար Հրանտ Վարդանյանը հեռուստաընկերությունը վաճառում է «Միկա» ընկերության նախագահ Միխայիլ Բաղդասարովին:

Հեռուստաընկերության տնօրեն Էդգար Մանուկյանին խնդրեցինք պատասխանել, թե որեւէ հիմք կա՞ր նման տեղեկություն տարածելու համար:

«Ինչ-որ մեկը չգիտեմ որտեղից հայտնաբերել է, որ «Ար» հեռուստաընկերությունը փոխանցվում է Միխայիլ Բաղդասարովին: Գուցե այդ լուրը տարածողը սլաքն ուղղեր հենց Բաղդասարովին ու նրանի՞ց ճշտեր իր ունեցած տեղեկությունը: Թե չէ, ինչպես ասում են, մի անխելք մարդ քար գցեց, հազար խելոք չկարողացան հանել:

Ես ոչ միայն հերքում եմ, այլեւ պնդում, որ Վարդանյան ընտանիքը Հայաստանում ունեցվածք օտարելու խնդիր չունի», պատասխանեց նա: Հեռարձակումը դադարեցվել է 25 օրով, սակայն հնարավոր է վերազինման աշխատանքներն ավելի շատ ձգձգվեն: Տնօրենի ասելով, հեռուստաընկերությունը հանրությանը կներկայանա հիմնովին նոր դեմքով, որովհետեւ ինչպես «Գրանդ հոլդինգի» բոլոր ձեռնարկությունները, այդ թվում «Հայրենիք» հեռուստաընկերությունը, բարձր մակարդակի վրա են եւ լավ ծանոթ հասարակությանը, հետեւաբար նույնը պահանջվում է նաեւ «Ար» հեռուստաընկերությունից: «Կլինեն նաեւ եթերի որակի, ծրագրային, սփռման ցանցի փոփոխություններ: Այժմ մեր հիմնական մտահոգությունը տեխնիկական վերազինումը հիմնովին սկսելն է»:

«Նախատեսվո՞ւմ է հաստիքների կրճատում հարցին», նա պատասխանեց, որ պարզ կլինի աշխատանքի ընթացքում, եթե որոշ տեղերում նկատվի հաստիքների ուռճացում, բնականաբար, կրճատումն անխուսափելի կլինի: Նա համոզված է, որ նոր հաղորդաշարեր սկսելով հեռուստաընկերությունը կգտնացնի հանրությանն ու սիրելի կդառնա:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեկ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թող 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՒՐԵԱՆ / հեռ 529221
Լուրերի սենյակ / հեռ 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Հանձնարարչային բաժանմունք
«Ազգ» թերթ
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ
Մասնավորեցում

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Վարդենիսի սերմնաբուծական» ՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 22-ի թիվ 1156-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Վարդենիսի սերմնաբուծական» ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Գեղարքունիքի մարզ, Վարդենիս
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1156-Ն, 22. 07. 04թ.
1.3.	Ընկերության տեսակը (ՎՍ)	-
1.4.	Ընդհանրացած հոդային տարածքը (հա)	-
1.5.	Գործունեության հիմնական տեսակը	սերմնաբուծություն
1.6.	Աշխատողների թվաքանակը* (01.04. 2003-ի դրությամբ)	8
1.7.	Նախահաշված ակտիվներ (հազ.դրամ)	6141
1.8.	Բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	6141
1.9.	Մասնավորեցման ենթակա պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	

* Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.10.04թ. դրությամբ կազմում է 3 մարդ:

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.04.2003թ. դրությամբ)

(հազրդրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	4374	6115
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	4374**	6115.3
♦	մեքենաներ և սարքավորումներ /3հաս/	2500	1258.8
♦	տրանսպորտային միջոցներ /4հաս/	1874	4856.5
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	26	26
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ	-	-

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

2.5.Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, Ընկերությունը 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, Ընկերությունը 2004թ. հունվարի 01-ի դրությամբ պարտավորություններ չունի:

2.7.Համաձայն «Վարդենիսի սերմնաբուծական» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.07. 2004թ. դրությամբ կազմում են 1659հազ.դրամ, որից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի, սոցիալական ապահովագրության գծով՝ 347հազ.դրամ:

2.8. Համաձայն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի զրության, 01.04.04թ. դրությամբ Ընկերության պարտավորությունները հիմնադրամին կազմում են հաշվարկային պարտք՝ 221.4հազ.դրամ, վճարման ենթակա 20.3հազ.դրամ, այդ թվում ապրամք՝ 8.5հազ.դրամ:Տույժ, տուգանք չունի:

2.9.Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 09.03.04թ. թիվ 1064/4-01 զրության, Ընկերության ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունները կազմում են՝ 41520դրամ, այդ թվում՝ ապրամք՝ 24000դրամ, տույժ 17520դրամ:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սմուռի կենսամն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական բաժնից),

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից՝ լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հագեցված լինի մրցույթին հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Սեղմված փաստաթղթերը Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ 1535հազ.դրամ/

մեքենաների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական ծրագրերներ, այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են սանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրության օրինակը սանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ներառվում է առաջարկվող գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը սանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, 4.11 կետի՝ «Հայաստանի Հանրապետության եկամուտների նախարարությունը՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն «Վարդենիսի սերմնաբուծական» ՓԲԸ-ի գույքային իրավունքների դադարեցման վերաբերյալ՝ տրամադրված 60 հեկտար հողամասի նկատմամբ ընկերության գույքային իրավունքների դադարեցման վերաբերյալ»:

4.6. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը վճարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը համարվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	279 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հասցեն	ԹԻԿ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	09-ը նոյեմբերի 2004թ. , ժամը՝14.00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Սմուռի կենսամն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչաշնչեցական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	09-ը նոյեմբերի 2004թ. , ժամը՝15.00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սմուռի կենսամն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
«Երևանի բեռնատար ավտոտրանսպորտային թիվ 1» ՊՓԲԸ-ի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 22-ի թիվ 1156-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Երևանի բեռնատար ավտոտրանսպորտային թիվ 1» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք.Երևան,Մենդելյան փ.18
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1156-Ն, 22. 07. 04թ.
1.3.	Ընկերության տեսակը (ՎՍ)	5065.09
1.4.	Ընդհանրացած հողային տարածքը (հա)	4.20658
	տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Սնուցում գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 1605005, 12.06.03
1.5.	Գործունեության հիմնական տեսակը	բեռների փոխադրում
1.6.	Աշխատողների թվաքանակը* (01.10. 2003թ.-ի դրությամբ)	18
1.7.	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	88111
1.8.	Ընկերության կանոնադրական կապիտալը (հազ.դրամ)	67650
1.8.	Բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	67650

* Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքի, աշխատողների թվաքանակը 01.10.04թ. դրությամբ կազմում է 5 մարդ:

2.Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.10.2003թ. դրությամբ)

(հազրդրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	48082	78621.8
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	47397**	76630.9
♦	շենքեր /2հաս/	15068	28742.9
♦	կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ (13հաս)	5402	9884.8
♦	մեքենաներ և սարքավորումներ /47հաս/	5486	9985.8
♦	տրանսպորտային միջոցներ /41հաս/	20223	26500.3
♦	արտ. նշան. գույք, գործիք /63հաս/	1218	1517.1
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	685	1990.9
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	9489	9489
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	20461	20461
♦	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	10629	10629
♦	անձնակազմի աշխատանքի կատարման գծով	5388	5388
♦	սոցիալական ապահովագրության գծով	4423	4423
♦	ստացական կոդեքսային պարտքերի գծով	21	21

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

2.5.Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, Ընկերությունը 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

2.6.Համաձայն «Երևանի բեռնատար ավտոտրանսպորտային թիվ 1» ՊՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռի, Ընկերության պարտավորությունները 01.07.2004թ. դրությամբ կազմում են 20138 հազ.դրամ, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 9436 հազ.դրամ, սոցիալական ապահովագրության գծով՝ 4429 հազ.դրամ:

3.Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սմուռի կենսամն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Սմուռի կենսամն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից՝ լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հագեցված լինի մրցույթին հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Սեղմված փաստաթղթերը Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սմուռի կենսամնի վարչաշնչեցական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ 16913հազ.դրամ/

մեքենաների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական ծրագրերներ, այդ թվում աշխատատեղերի և նվազագույն աշխատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

3.14. Մրցույթի կայացման դեպքում ընկերությունը պետք է վերակազմակերպվի «Երևանի բեռնատար ավտոտրանսպորտային N 1» բաց բաժնետիրական ընկերության:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են սանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրության օրինակը սանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ներառվում է առաջարկվող գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը սանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, գնորդին կառաջարկվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնել ընկերության կողմից զբաղեցված հողատարածքները:

4.6. Համաձայն ՀՀ կառավարության 22.07.04թ. N1156-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը վճարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը համարվում է չկայացած:

4.8. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.9. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	6 765 000 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հասցեն	ԹԻԿ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	23-ը նոյեմբերի 2004թ. , ժամը՝14.00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Սմուռի կենսամն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչաշնչեցական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	23-ը նոյեմբերի 2004թ. , ժամը՝15.00 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սմուռի կենսամն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Սանմանագրություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2004 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8 -ԻՆ, ԺԱՄԸ 12:00-ԻՆ
«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ,ՀՐ.ՔՈՉԱՐԻ 27)
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1233-Ն որոշման, ՀՀ կառավարության 19.09.2001 թ. թիվ 883 որոշմամբ լուծարվող «Տաշիրի բեռնատնտեսարաար ավտոտրանսպորտային» ՊՓԲԸ-ի (հասցեն ք. Տաշիր, Կիրովի 14) հաշվեկշռում գտնվող շենքերը

N	Անվանումը	Մակերեսը (հա.մ)	Գնահատված մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն դրամ)	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն դրամ)
1	Վարչական մասնաշենք	1773.8	51208600	5120860
2	Արտադրական մասնաշենք	1540.3	14503200	1450320
3	Կաթսայատուն	241.8	5126200	512820
4	Թթվածնի ոչահոս	15	101500	10150
5	Սգրեգատների ոչահոս	300	2029800	202980
6	Պահոս	237.5	1606900	160690
7	Կալորիֆերային մասնաշենք	128.8	1538400	153840

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնումները, որոնք մինչև նոյեմբերի 8-ը, ժամը 11:30 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.
Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնումները, որոնք մինչև նոյեմբերի 8-ը, ժամը 11:30 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.
-աճուրդի նախավճարի մուտքման անդորրագիրը, որի չափն է 10150 դրամ, մուտքագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաև կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.
-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:
Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:
Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:
Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:
Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք. Երևան, Հրայա Քոչարի 27) մինչև նոյեմբերի 8-ը, ժամը 11:30, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:
Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտերին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):
Գույքի պահպանումը իրականացվում է ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից:
Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:
Աճուրդը վարում է աճուրդավարը:
Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը (լոտերի վաճառքը իրականացվում է վերը նշված հերթականությամբ): Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախման աճուրդավարի մուտքի ճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:
Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով որոշված մասնակիցը:
Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մնացած ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենա բարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում և տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:
Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:
Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի գնի 10 տոկոսի չափով գումարը:
Աճուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
Վաճառվող լոտերին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել (051) 2-21-12 հեռախոսահամարով:
Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Եր-ան, Հրայա Քոչարի 27 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 27-65-94, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՀՀ կառավարությանն առընթեր գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է աճուրդի,
որը տեղի կունենա 2004 թ. նոյեմբերի 8-ին եւ 23-ին ժամը 11.00-ին
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում,
հասցեն՝ Հր. Քոչարի 27
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՀՀ կառավարության 04.12.03 թ. N1610-Ա որոշմամբ լուծարվող «Գյումրու խաղաքաղաքացիական կառույցների ուղեմաս» ՊՓԲԸ-ի
(հասցեն Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գարեգին «Ա»-2) հաշվեկշռում գտնվող գույքը

N	Գույքի անվանումը	Շահագ. տարեթիվ	Քանակ	Մաշվ. %	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ
	Հիմնական միջոցներ				
1	Կոնդիկային հստոց	1980	1	100	26285
2	Ոանդող հաստոց	1973	1	100	21435
3	Կտրող հաստոց	1986	1	100	34095
4	Բետոնախառնիչ	1963	1	100	9925
5	Օդապիդիչ 8	1977	1	100	9545
6	Եռակցող տրանսֆորմատոր	1980	1	100	5755
7	Սղելու հաստոց	1956	1	100	12445
8	Սղելու հաստոց	1963	1	100	12445
9	Շաղախախառնիչ	1986	1	100	7825
10	Կշեռք	1966	1	100	4090
11	Խառատային հաստոց	1986	1	100	33740
12	Մետաղյա պահարան	1986	2	100	3636
13	Սեյֆ	1976	4	100	9090
14	Գրասեղան 2 տումբ.	1986	1	100	5151
15	Սեղանի դիմադիր	1986	1	100	3409
16	Գրասեղան 2 տումբ.	1986	3	100	10226
17	Գրասեղան 2 տումբ.	1986	1	100	4166
18	Գրասեղեանոցի սեղան	1986	1	100	1515
19	Գրասեղան 1 տումբ.	1986	2	100	3030
	Շենքեր			Շրջող. մակ. /ք.մ/	
21	Արմինիստրատիվ շենք	1985	483.31	47	3756575
22	Ընդհանուր ցեխեր	1985	602.47	44	2015585
23	Բոյլերի ավտոտնակ	1985	129.52	47	977900
24	Պահակատուն	1985	4.2	47	241130
25	Ավտոտնակներ	1954	241.72	100	808685
	Տրանսպորտային միջոցներ				
26	Միկրոավտոբուս ՆԻՍԱ	1988	1	100	22575
27	Գազ 53-12 ասենիզացիոն	1987	1	100	112335
28	Գազ 53-12 աղբատար	1989	1	100	126725
29	Գազ 53-27 կոդային	1989	1	100	144000
30	ՀԻԼ ՍՍՀ-4502 ինքնաթափ	1982	1	100	138600
31	ՀԻԼ-133 ինքնաթափ	1989	1	100	180000
32	ՀԻԼ-157 կոդային	1989	1	100	127800
33	Գազ 52 կոդային	1983	1	100	68400
34	ՍՍՀ -3549 ինքնաթափ	1988	1	100	225000
35	Կցորդ 1 օասի	1985	1	100	7955
36	ՍՀ 24-10 մարդատար	1995	1	100	688970
37	Կցորդ 2 օասի	1995	1	100	37875
38	Մեքի պահեստ	1974	114.44	100	382865
39	Գաջի պահեստ	1924	57.2	100	191365
40	Փայտամշակման ցեխ, բաղնիք, ցեմենտի պահեստ	1924	245.45	100	821165
41	Պահեստ	1924	13.44	100	44965
42	Բետոնի ցեխ	1973	83.7	100	280070
43	Արհեստանոցների պահեստ	1924	149.4	100	499825
44	Սանահանքի տեղամասի գույքը որպես մեկ ամբողջական միավոր, այդ թվում՝				2432956
	Հիմնական միջոցներ				
1	Կոնդիկային հստոց	1972	1	100	
2	Բետոնախառնիչ	1963	1	100	
3	Շաղախախառնիչ	1977	1	100	
4	Սղելու հաստոց	1977	1	100	
5	Ավտոկռունկ ԿՍ-2561	1983	1	100	
6	Գրասեղան 2 տումբ.	1986	1	100	
7	Գրասեղան 1 տումբ.	1989	1	100	
8	Գրասեղեանոցի սեղան	1989	1	100	
9	Սեյֆ	1976	1	100	
	Տրանսպորտային միջոցներ				
10	Գազ 53-12 աղբատար	1989	1	100	
11	Գազ 53-12 ասենիզացիոն	1989	1	100	
	Շենքեր		Շրջող. մակ. /ք.մ/		
12	Պահեստ	1955	50.4	100	
13	Փայտամշակման արհեստանոց	1955	285.4	100	
14	Գրասենյակ	1955	127.5	100	
15	Ավտոտնակներ	1955	119.6	100	

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնումները, որոնք մինչև յուրաքանչյուր աճուրդին նախորդող օրը, ժամը 17:00-ը աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.
-աճուրդի նախավճարի մուտքման անդորրագիրը, որի չափն է 1515 դրամ, մուտքագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաև կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.
-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:
Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:
Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:
Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:
Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք. Երևան, Հրայա Քոչարի 27) մինչև յուրաքանչյուր աճուրդին նախորդող օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:
Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտերին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):
Գույքի պահպանումը իրականացվում է ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից:
Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:
Աճուրդը վարում է աճուրդավարը:
Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը (լոտերի վաճառքը իրականացվում է վերը նշված հերթականությամբ): Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախման աճուրդավարի մուտքիկի ճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:
Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով որոշված մասնակիցը:
Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մնացած ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենա բարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում և տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:
Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:
Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի գնի 10 տոկոսի չափով գումարը:
Աճուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
Գնողը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված ծախսերը՝ համաձայն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարի 21.05.02թ. N127-Ն հրամանով հաստատված կարգի:
Վաճառվող լոտերին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել (041)4-26-89 հեռախոսահամարով:
Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Եր-ան, Հրայա Քոչարի 27 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 27-65-94, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Իրականում Ավ. Իսահակյանի անվան գրադարանի շուրջը

Ավ. Իսահակյանի անվան գրադարանի փակման թե տեղաշարժման խնդիրը իշխանությունների համար խոսանում է դառնալ դանդաղ գործողության հաջորդականը Հյուսիսային պողոտայից, Դալմայի այգիներից, Պարարվեստի ուսումնարանից հետո: Երեկ փոխվարչապետ Կամո Արեյանը լրագրողների առջև հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որի ողջ իմաստն այն էր, թե քաղաքապետարանը գրադարանի շենքի ճակատագիրը տնօրինելու որևէ իրավասություն չունի (շառից, փորձանքից հեռու): Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող Ամիրյան 2 հասցեի Ավ. Իսահակյանի գրադարանը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի շենք-շինությունները ընդամենը անհատույց օգտագործման են տրամադրվել նրան: «Շենքը ՀՀ-ի սեփականությունն է, եւ շենքի տնօրինման լիազորությունները վերապահված են լիազոր մարմնին՝ պետական գույքի կառավարման վարչության», մի քանի անգամ շեշտեց փոխվարչապետը: 1998 թ. Երեւանի քաղաքապետի որոշմամբ, «Կրեդիտ Երեւան» բանկին թույլատրվել է վերակառուցել շենքի 3-րդ հարկ, եւ փոխանակել գրադարանի 1-ին հարկի (285 քառ.մ) եւ նկուղային հարկի 88 քառ. մ-ի հետ: 2003 թ. աշնանը, երբ բանկը սնանկացել էր, ավարտվել է տարածքների փոխանակումը:

«Քաղաքապետարանը սեփականության որեւիցե իրավունք չունի այդ շենքի նկատմամբ: Շենքի օգտագործման եւ հետագա ճակատագրի տնօրինման վերաբերյալ քաղաքականությունը վերապահված է ՀՀ կառավարությանը: Շենքի վերաբերյալ որեւէ պաշտոնական առաջարկ չի եղել քաղաքապետին եւ չէր էլ կարող սպասվել», հայտարարեց Կամո Արեյանը:

Ասենք, որ վիճահարույց շենքն ընդգրկվել է վերջերս հաստատված՝ Երեւանի պահպանության ենթակա պատմական հուշարձանների ցուցակում, կամայական որեւէ որոշման ենթակա չէ, եթե այդ մասին չկա կառավարական որոշում:

Ինչո՞ւ է չմեղանում քաղաքապետարանը

Շարունակելով նախապատմությունը հիշեցնենք, որ «Կրեդիտ բանկի» լուծարումից հետո շենքը վաճառվել է «Յունիբանկին»: Ըստ գրադարանի տնօրեն Հաստիկ Կարապետյանի, ամեն ինչ սկսվել է գրադարանին «Յունիբանկի» առաջարկից՝ շենքի տեղում առեւտրազվարճանքային կենտրոն կառուցելու մասին: Հաստիկ Կարապետյանը բացասական պատասխան է տվել: Մեր հարցին, թե ինչ են մտադիր անել, եթե կառավարությունը որոշի շենքը, այնուամենայնիվ, տրամադրել «Յունիբանկին», տիկին Հաստիկը պատասխանեց.«Ես համոզված եմ, որ կառավարությունը նման որոշում չի կայացնի, որովհետեւ ամեն գնվող իր ու առարկա իր սահմաններն ունի»:

Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանի տնօրենը փոխքաղաքապետի հայտարարությանն ի պատասխան ասաց. «Ինձ կանչել են քաղաքապետարան եւ ասել, դուք ո՞վ եք, որ որոշեք շենքի ճակատագիրը, ի՞նչ իրավունք ունեք մերժելու բանկին, երբ այդ հարցը միայն քաղաքապետարանում է լուծվում: Իմ ներկայությամբ քաղաքապետը կարգադրեց իր 2 փոխքաղաքապետներին՝ հրավիրել բանկի ներկայացուցիչներին եւ քննարկել նրանց առաջարկն առանց տնօրենի:

Քաղաքապետարանը հանկարծ հասկացավ իր իրավասությունների սահմանի մասին»:

Ավ. Իսահակյանի անվան գրադարանը Երեւանի տարբեր թաղամասերում 7 մասնաճյուղեր ունի 1997 թ. 40 մասնաճյուղերի փոխարեն: 7 տարվա մեջ 13 մասնաճյուղ փակվել է: Համայնքները մեկը մյուսի հետեւից փակեցին այդ մասնաճյուղերը, պատճառաբանելով, թե դրանք պահելու միջոցներ չունեն:

Այսօր գրադարանը 31 հզ. ընթերցող ունի: Այս պահին մարզային գրադարանների, բուհական հաստատությունների, գիտնականների ու գրողների նախաձեռնությամբ ակտիվ ստորագրահավաքներ են կազմակերպվում ի պաշտպանություն գրադարանի: Փակվելու խնդիր չկա, բայց գրադարանի տեղափոխվելու մասին ոչ կոլեկտիվը, ոչ էլ ընթերցողները չեն ուզում անգամ լսել:

«Յունիբանկը» այս պատմության հետ ոչ մի կապ չունի», ասում է Վարդան Աթայանը

Անսպասելի էր «Յունիբանկի» գործադիր տնօրեն Վարդան Աթայանի արձագանքը: «Հաստիկ Կարապետյանին «Յունիբանկը» նման առաջարկ չի արել, մենք իմքներս այստեղ վարձակալ ենք: Ես զարմացած եմ, որ հեռուստաալիքներով անընդհատ «Յունիբանկ»-ն փնովում: Ինչ կապ ունի այստեղ բանկը»: Վարդան Աթայանը հայտնեց, որ իմքն այսօր մամուլի ասուլիս է հրավիրելու, որի ընթացքում մանրամասն պարզաբանումներ կանի:

Համենայն դեպս, անկախ նրանից, թե ի վերջո, ինչ կպարզվի այս խառնափնթոր, տեղ-տեղ անհասկանալի դրվագներով պատմությունից, զարգացումները խոստանում են հետաքրքրական բացահայտումներ:

Նաեւ անկախ ամեն ինչից, մշակութային օջախները բանկերին վաճառելը կարծես ավանդույթ է դառնում մեզանում: Նախադեպը 1996 թ. էր, երբ Երեւանի պատմության թանգարանը տվեց Վաչե Մանուկյանին: Չնայած մեծ աղմուկին, անցած տարի հանրագիտարանի շենքը վաճառվեց «Ինեկո» բանկին: Հետաքրքրական է, որ բանկիրները նախընտրում են նման գործարքներ կնքել անպայման պետական ենթակայության կառույցների հետ եւ ոչ մասնավորի: Թե փոխադարձ շահագրգռություններն ինչ մեխանիզմ է գործում, կարելի է միայն ենթադրություններ անել: Համենայն դեպս, քաղաքի կենտրոնում գտնվող, առավել եւս պահպանության ենթակա հուշարձանների համար դրանց սեփականատեր պետությունը արժեքին ու նշանակությանը համապատասխան գներ պիտի սահմանի, որպեսզի դրանք հետագայում գայթակղության ավար չդառնան:

Վաղվա համարում առիթ կունենանք առավել հանգամանալի ներկայացնելու «Յունիբանկի» տեսակետը:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԴԱՐՅԱՆ

Այս տարի Հայաստան է մտել 500 մլն դոլար

Այս տարվա 9 ամիսներին արտերկրից Հայաստան մասնավոր փոխանցումները կազմել են 500 մլն դոլար, որը 50 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փոխանցումների ծավալից: Այս մասին երեկ ՀՀ կենտրոնական բանկում 2004 թ. 9 ամիսների դրամավարկային քաղաքականության ընթացքի եւ չորրորդ եռամսյակի ծրագրային ուղղությունների ներկայացման ժամանակ հայտնեց ԿԲ վիճակագրության վարչության պետ Հակոբ Զորյանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ Հայաստանից արտերկիր կատարված արտահոսքը կազմել է 330 մլն դոլար, ինչը մոտ 60 տոկոսով է ավելի նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշից: Սակայն Հայաստանից արտահոսքի մեծ մասը կատարվել է բանկային համակարգից եւ բիզնես բովանդակություն ունի, իսկ ներհոսքը՝ սպառողական նպատակներ: Ամենամեծ գումարներ մուտք են գործել Ռուսաստանից եւ ԱՄՆ-ից, իսկ դուրս են եկել դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ եւ դարձյալ ԱՄՆ:

Մինչ այս տվյալների հրապարակումը դրամավարկային քաղաքականության ընթացքին ու չորրորդ եռամսյակի ծրագրային ուղղություններին անդրադարձավ դրամավարկային քաղաքականության վարչության պետ Ասոն Մկրտչյանը: Ըստ այդմ, տնտեսական ցուցանիշներն այս տարվա հունվար-օգոստոսին հետեւյալն են: Տնտեսական աճը կազմում է 9,6 տոկոս, նախորդ տարվա 8 տոկոսի փոխարեն: Առավել մեծ աճ արձանագրած ճյուղերն են շինարարությունը՝ 17,8 տոկոս, գյուղատնտեսությունը՝ 14,4 տոկոս, ծառայությունների ոլորտը՝ 16 տոկոս, նախորդ տարիներին մեծ աճ արձանագրած արդյունաբերության փոխարեն: Արտադրողականության անվանական աճը կազմել է 18,6 տոկոս, աշխատավարձերինը՝ 31 տոկոս: Այդ թվում՝ բյուջետային ծառայողների աշխատավարձերի աճը կազմել է 40,4 տոկոս, ոչ բյուջետայիններինը՝ 27,2 տոկոս: Բարելավվել է արտաքին առեւտրի վճարային հաշվեկշիռը՝ պակասուրդը նվազել է 5 տոկոսով:

Փողի բազան տարեսկզբին ծրագրված 4,3 տոկոս նվազման պարագայում նվազել է 3,8 տոկոսով, իսկ փողի զանգվածը ծրագրված 6,1 տոկոս աճի պայմաններում աճել է 8,1 տոկոսով: Վարկավորման ցուցանիշն աճել է 27,2 տոկոսով: Ընդ որում, ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով, սակայն գերակշռել են արտարժութային վարկերը՝ մոտ 70 տոկոս:

Ասոն Մկրտչյանը նշեց, որ ԿԲ-ն իրատեսական է համարում տարեվերջին մինչեւ 3 տոկոս ծրագրային ցուցանիշի պահպանումը, ինչին կարելի է հասնել անգամ, եթե չորրորդ եռամսյակում գրանցվի 4 տոկոս գնաճ: Դրա գերազանցումը, ըստ գնահատումների, հնարավոր է չնախատեսված գնաճային ռիսկերի դեպքում:

Դրամավարկային քաղաքականության վարչության պետը հայտնեց, որ ԿԲ-ն չորրորդ եռամսյակում նախատեսում է փողի ծավալն ավելացնել 9,5 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է փողի պահանջարկի սեզոնայնությամբ՝ տարեվերջի կտրուկ աճով: Այսինքն, փողի բազայի կառավարման ամսական սցենարում հոկտեմբերից մինչեւ դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում կապահովվեն աճի համեմատաբար կայուն տեմպեր, իսկ դեկտեմբերի վերջին 20 օրում, կապված ամանորյա ծախսերի հետ, փողի բազան կաճի մոտ 6 մլրդ դրամով:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Մոսկվայի փոքրիկ ներկայացուցիչը Երեւանում

Այստեղ արձարան չի լինելու

Թատերական կյանքով ապրելու մեր հասարակության հին ու բարի սովորույթը վերջին տարիներին վերածվել է լավագույն դեպքում այս կամ այն ներկայացումը դիտելու: «Մեր ժամանակ թատրոն գնում, գիտեմք՝ ներկայացումից հետո դեռ մի քանի ժամ ընկերներով զբոսնելու ենք, քննարկելու

այս կամ այն դերասանի խաղը, ներկայացման այս կամ այն դրվագը, հիշում է 60-ամյա Վարուժան պարոնիկը: Հիմա երիտասարդները միայն ժամանցի համար են տեղ գնում: Թոռնիկս նույնիսկ թատրոն գնալիս հորից արձարանի համար գումար է վերցնում»:

Վարուժան պարոնիկը միակը չէ, որ այսօր արձարանների ամենուր թափանցելիությանը «խանդով» է վերաբերվում եւ թախիծով հիշում երկու-երեք տասնամյակ առաջ մայրաքաղաքում գոյություն ունեցող պուրակներն ու զբոսայգիները: Հայտնի է, որ երբ պետական օդակների եւ բիզնեսմենների կոմերցիոն շահերը համընկնում են, հասարակության շահը մնում է սպասում:

Արդեն մի քանի օր Դրամատիկական թատրոնի շենքին հարող Գետոյ Քոչարի անունը կրող փողոցը վերանվանվել է Մոսկովյան ծառուղի: Ծրագիրը ֆինանսավորել է Մոսկվայի «Կենտրոն» վարչական տարածքը, որի ղեկավար Սերգեյ Բայդակովի գնահատմամբ՝ ծառուղին Մոսկվայի փոքրիկ ներկայացուցիչն է Երեւանում եւ հայ-ռուսական բարեկամության իսկական վկան: Գրեթե 50 մետր երկարություն ունեցող ծառուղում ութ եղեւնի է, նոր նստարաններ. մի խոսքով՝ հանգստի հաճելի վայր է:

Ծառուղու բացման արարողության ժամանակ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանը հույս հայտնեց, որ այն շատ շուտով երեւանցիների սիրելի վայրերից կդառնա: Կենտրոն համայնքի ղեկավար Գագիկ Բեգլարյանն էլ հավաստիացրեց, որ ծառուղում ոչ մի արձարան չի կառուցվի:

Կարծում ենք՝ հանրապետությունում կանաչ տարածքների նկատմամբ համատարած անտարբեր վերաբերմունքի պայմաններում գնահատելի է երկու մայրաքաղաքների համայնքների ղեկավարների համագործակցությունը, սակայն զարմանալի է՝ մի՞թե այդ փոքրիկ ծառուղու նշանակությունը Երեւանի բնակչության համար այդքան մեծ է, որ բացելու պատվին արժանանում են հանրապետության նախագահը, Երեւանի քաղաքապետը, միջոցառումն էլ գեղեցկացնում իրենց ալախոյով:

Ֆ. Մ.

Տեղի ունեցավ Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Խաչ եկեղեցու ...

1-ին էջից

Նույն օրը, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ բարձր մասնակցությամբ Ալեքսի Բ պատրիարքի, կատարվեց Ս. Խաչ եկեղեցու հիմնարկեքը: Օծյալ 16 քարերը տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքերի մեջ: Արարողությունից հետո ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Հայոց Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց Ալեքսի Բ պատրիարքին եւ Ռուսաստանի իշխանություններին եկեղեցու շինարարությանը ցուցաբերած մեծ աջակցության, ինչպես նաեւ Մոսկվայի հայ համայնքի հանդեպ դրսեւորած հոգատար վերաբերմունքի համար:

Վեհափառ հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նաեւ եկեղեցու բարերարներին՝ ազգային բարերար Վիտալի Գրիգորյանցին, բարեգործ-շինարար Մուրադ Սարգսյանին եւ բոլոր այն անձանց, որոնց համար եկեղեցու կառուցումը հոգու պարտք է եւ անկեղծ արտահայտությունը իրենց որդիական սիրո՝ հանդեպ Հայ առաքելական եկեղեցին եւ հարազատ ժողովուրդը:

Այնուհետեւ օրհնության խոսքով հանդես եկավ նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ալեքսի Բ պատրիարքը: Նա իր ուրախությունը հայտնեց նոր եկեղեցու կառուցման առիթով՝ հույս հայտնելով, որ եկեղեցու կառուցմամբ էլ ավելի պիտի ամրապնդվեն ու զորանան կապերը երկու ժողովուրդների եւ եկեղեցիների միջեւ:

Հայ համայնքին շնորհավորեց նաեւ Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը: «Երբ մենք խոսում ենք Հայ առաքելական եկեղեցու մասին, ապա անկասկած զգում ենք մասնավոր հոգեւոր հարազատությունը, որ միավորում է մեր եկեղեցիներին, հատուկ հարազատությունը մեր ժողովուրդների, որ սկբնավորվեց շատ դարեր առաջ, որը, փառք Աստծո, ամրապնդվում է այսօր եւ պիտի ամրապնդի, հուսով եմ, նաեւ ապագայում», ասաց Մոսկվայի քաղաքապետն իր խոսքում:

Հանդիսությանը մասնակցում էին Կենտրոնական դաշնային օկրուգում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի լիազոր ներկայացուցիչ Գ. Պոլտավչենկոն, Մոսկվայի քաղաքապետ Յ. Լուժկովը, Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմական խորհրդի ատենապետ Ա. Չիլինգարովը եւ բազմաթիվ հայ հավատացյալներ:

Արարողությունից հետո պատրիարքական նստավայրում տեղի ունեցավ երկու հովվապետների հանդիպումը, որի ընթացքում Ալեքսի երկրորդը հանձնեց Ռուս ուղղափառ եկեղեցու բարձրագույն պարգեւը՝ Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալի շքանշանը՝ ռուս եւ հայ ժողովուրդների եւ եկեղեցիների համագործակցության եւ բարեկամության ամրապնդման գործում մեծ ներդրման համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 19-ին, ժամը 15.00-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում կազմակերպվում է կլոր սեղան՝ «Եհովայի վկաներ» կազմակերպության գրանցման կապակցությամբ: Քննարկմանը կմասնակցեն ուսանողական խորհուրդների, կուսակցությունների երիտասարդական թեւերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ առաջիկայում բողոքի մի շարք միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ՊԻՏԱԿ

Ռուսաստանը Ախալքալաքի 62-րդ ռազմակայանը «մաքրում» է տեղի հայերից

Արդեն 500 ջավախքցի հայ սպաների տեղափոխել են ռուսական այլ ռազմակայաններ

Ախալքալաքում տեղակայված ռուսական 62-րդ ռազմակայանը ջավախահայության համար ունի տնտեսական, հոգեբանական եւ անվտանգության առումով չափազանց կարեւոր նշանակություն: Համաձայն 1999 թ. Ստամբուլի ԵԱՀԿ գագաթաժողովի պայմանավորվածությունների, Մոսկվան համաձայնություն է տվել Վրաստանի տարածքում մնացած իր երկու ռազմակայանների (Ախալքալաքի 62-րդ, Բաթումի 12-րդ) դուրսբերման ժամկետների հարցով բանակցություններ սկսել Թբիլիսիի հետ: Վրացական կողմը պնդում է, որ երեք տարին բավարար է ռուսական ռազմակայանների դուրսբերման համար, մինչդեռ Մոսկվան պահանջում է 11 տարի:

Նախագահի պաշտոնը զբաղեցնելուց հետո Միխայիլ Սաակաշվիլին մեկնեց Մոսկվա, իր խոսքերով՝ «բարեկամանալու Վլադիմիր Պուտինի հետ»: Ռուս-վրացական բարեկամություն, ակնհայտորեն, չի ստացվում, թեեւ Վրաստանի նախագահը Կրեմլում «մոռացության մատնեց» Ախալքալաքի եւ Բաթումի ռազմակայանների հարցը: Մյուս կողմից, վերջին շրջանում Ռուսաստանն Ախալքալաքի 62-րդ ռազմակայանը «մաքրում» է տեղի հայերից: Այս ռազմակայանում ծառայող մոտ 500 ջավախքցի հայ սպաներ, որոնք Ռուսաստանի քաղաքացիություն ունեն, տեղափոխվել են ռուսական այլ ռազմակայաններ: Նրանց փոխարինել են սպաներ Հյուսիսային Կովկասի հանրապետություններից, Ռուսաստանի տարբեր մարզերից:

Ախալքալաքի երիտասարդական միության նախագահ Վարդան Հակոբյանն ասում է, որ 62-րդ ռազմակայանը ջավախահայության համար հույս է անվտանգության առումով: «Վրացական պետությունն այս ռազմակայանի առկայության պայմաններում հայ ազգաբնակչության հանդեպ ավելի զուսպ է», ասում է նա:

Սուրբ Նշան եկեղեցու հովիվ տեր Սամվել Բաբայանը հավելում է, որ թուրքական գործոնն այժմ էլ զգալի է Ջավախքում: Քահանան հիշեցնում է 1918 թ. թուրքական զորքերի իրականացրած ջավախահայության ջարդերը: Բացի հոգեբանականից, 62-րդ ռազմակայանը լուծում է սոցիալական հարցեր. մինչեւ վերջերս, երբ դեռ 500 ջավախքցի սպաների չէին տեղափոխել Ռուսաստան, ռազմակայանը «կերակրում» էր մոտ 2000 ընտանիքի:

Ախալքալաքի շրջանային վարչակազմի ղեկավար Արթուր Երեմյանը նկատում է, որ ռազմակայանի դուրսբերմամբ ախալքալաքցիների մի հատված կկորցնի եկամտի մշտական աղբյուրը: Վրաց-թուրքական սահմանի Ջավախքի հատվածում սարեր են, եւ մինչեւ 20-րդ դարի 60-ական թթ. եղել են անասնագողության դեպքեր: Երեմյանն ասում է, որ անվտանգության առումով 62-րդ ռազմակայանն ունի հոգեբանական կարեւոր նշանակություն, մյուս կողմից նշում, որ Վրաստանում արդեն ստեղծվում է կանոնավոր բանակ:

Ուշագրավ մեկ փաստ եւս. վրացական նոր իշխանությունները համաձայն են, որ Ջավախքի հայ երիտասարդները ծառայեն վրաց-թուրքական սահմանում՝ սահմանապահ զորքերում: Մինչեւ վերջերս Ջավախքի հայ երիտասարդները, որոնք բացառություններով, չէին ծառայում վրացական բանակում: Վրաստանի օրենքը թույլ էր տալիս մոտ 1000 դոլար վճարելով ազատվել բանակում ծառայելուց: Նոր իշխանությունները նախապատրաստվում են բանակում ծառայելը դարձնել պարտադիր բոլոր քաղաքացիների համար:

Ախալքալաքում գործող «Վիրք» կուսակցության համանախագահ Դավիթ Ռստակյանն ասում է, որ 62-րդ ռազմակայանը չի լուծում սոցիալական խնդիրները, բայց ժամանակին աջակցություն էր ապահովում աշխատատեղեր: «Այսօր ընդամենը 200 հայ սպաներ են մնացել, մնացածներին ուղարկեցին Ռուսաստան», նշեց նա: Հարցին, թե 62-րդ ռազմակայանի դուրսբերման դեպքում ջավախահայությունը դեմ դուրս կգա՞, Ռստակյանը պատասխանեց. «Եթե ռուսները չցանկանան ռազմակայանը դուրս բերել եւ այդ հարցում ջավախքցիների օգնության մասը բավարարի, ապա կօգնենք: Բայց եթե ռուսներն ուզում են հանել, մենք պիտի դեմ դուրս գանք»:

«Ջավախք» ժողովրդական շարժման նախկին ակտիվիստ, այսօր «Բարեփոխումների աջակցության եւ ժողովրդական զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Արարատ Եսայանի կարծիքով, ջավախահայությունը պատրաստ չէ ռազմակայանի դուրսբերմանը, քանի որ դեռեւս առկա է հոգեբանական՝ թուրքերից պաշտպանվելու, անվտանգության գործոնը: «Տնտեսական առումով ռազմակայանն այլեւս այնքան էական չէ: Շատ քիչ ախալքալաքցիներ են մնացել, ովքեր ծառայում են ռազմակայանում, նրանց փոխարինել են Ռուսաստանի քաղաքացիներ», ասում է Եսայանը:

Ինչո՞ւ է Ռուսաստանը 62-րդ ռազմակայանում ծառայողների «էթնիկ կազմը» փոխում: Պաշտոնական ռուսական աղբյուրները նշում են, որ 500 հայերի տեղափոխումը Ռուսաստանի այլ ռազմակայաններ եւ նրանց փոխարինումը ոչ հայերով պարզապես պլանային ռոտացիա է: Կարելի է հավատալ կամ կասկածով վերաբերվել նման բացատրությանը: Ակնհայտ է մեկ կարեւոր իրողություն. 500 հայ սպաների տեղափոխմամբ Ռուսաստանն իր «նպաստն» է բերում Ջավախքի հայաթափման գործին: Որեւէ կասկած չկա, որ այդ 500 հայ սպաների եւ նրանց ընտանիքների մեծ մասը այլեւս չի վերադառնա հայրենի տներ:

Եվ ամենակարեւորը. մոտ 200 տարի Կովկասում ռուսական կայսերապաշտական քաղաքականության համար կարեւորվել է «հայկական գործոնը»: Պատմական վճռական պահերին ռուսները լել են հայերին՝ նրանց թողնելով միայնակ թուրքական յաթաղանի առաջ: Ամենայն հավանականությամբ, ռուսները կհեռանան Ախալքալաքից: Մեզ համար կարեւոր է ոչ թե նրանց հեռանալը, այլ դրա արդյունքները: Անհրաժեշտ է հերթական անգամ չընկնել ռուսական ոլորտոցի մեջ: Հակառակ դեպքում կվտանգվեն ջավախահայությունը եւ հայ-վրացական հարաբերությունները:

ԹԱԳՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
Ախալքալաք-Երեւան

«Երանի ամեն մի էթնիկ խումբ այնքան հավատարիմ լիներ իր ծագմանը, որքան հրեաները»

1-ին էջից

- Կարո՞ղ եք ասել, որ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Հայկական միջազգային տնտեսական ֆորումի հանդեպ դրական է նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության վերաբերմունքը:

- Այո, կուսակցության վերաբերմունքը միանգամայն դրական է, արդեն ֆորումի աշխատանքներին ես մենակ չեմ մասնակցել, ինձ հետ էին կուսակցության կենտրոնական վարչության անդամները, մասնավորապես մամուլի դիվանի աշենարետ Հակոբ Վարդիվարյանը: Մենք նամակ էինք գրել՝ տեղեկացնելու, որ ֆորումի աշխատանքներին ցանկանում ենք մասնակցել կուսակցական պատվիրակությամբ, այլ ոչ թե անհատապես: Այնպես որ, ՌԱԿ-ը դրական է վերաբերվում ֆորումին, ուզում ենք հաջալերել դրա աշխատանքները:

- Պրն Ազատյան, «Ազգի» հոկտեմբերի 13-ի համարում հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների առնչությամբ ՌԱԿ-ի հայտարարությունը, որտեղ կուսակցությունը հայերին կոչ էր անում պաշտպանել Ջոն Քերիի թեկնածությունը: Ինչ կարծիքի եք Քերիի եւ նախագահ Ջորջ Բուշի միջեւ ընթացող ընտրապայքարի մասին:

- Ներկա պահին չափազանց դժվար է գուշակել ընտրությունների ելքը, որովհետեւ մոտ են հարցախույզերի արդյունքները, որքան էլ հեռուստատեսային բանավեճերն ընթացել էին Քերիի օգտին: Նա մեծ հեղինակություն ունի իբրեւ հռետոր, պետական եւ քաղաքական գործիչ, առհասարակ չափազանց մեծ են նրա ինտելեկտուալ կարողությունները: Բուշն այդ կարողությունները չունի: Սակայն Բուշի թիկունքում ամբողջ վարչակազմն է՝ չափազանց խորամանկ ու խելացի: Բուշը վարչակազմի դիմակն է, ներկայացուցիչը: Իսկ վերջինն ԱՄՆ-ում մեծ ուժ է, հետեւաբար, որքան էլ բանավեճերն ի նպաստ Քերիի ընթանան, դա տակավին հիմք չէ ենթադրելու, որ քվեներով նա առաջ կանցնի Բուշից: Այսինքն՝ չի բացառվում ոչ Բուշի վերընտրությունը, ոչ էլ ընտրություններում Քերիի հաղթանակը:

- Դուք վարչակազմ ասելով նկատի ունեք «նոր պահպանողականներին», որոնք ԱՄՆ-ի հրեական լոբբիի ազդեցիկ ներկայացուցիչներն են:

- Խնդիրը լոբբին չէ, «նոր պահպանողականներն» իրենք հրեաներ են եւ հավատարիմ իրենց ակունքներին: Երանի էթնիկ ամեն մի խումբ այնքան հավատարիմ լիներ իր ծագմանը, որ ԱՄՆ-ի ամբողջ ուժն ուղղորդեր դեպի ակունքները: Ես բարի նախանձով եմ անդրադառնում «նոր պահպանողականների» գործունեությանը: Նրանք ԱՄՆ-ի գործող նախագահի շուրջն են, հակահրեական պատերազմը նախագծվել ու կազմակերպվել է նրանց ձեռքով:

- Վերջերս Անկարա էր ժամանել Ամերիկյան հրեական կոմիտեի ղեկավարներից Դեյվիդ Հարիսը եւ հայտարարել, որ ոչ բոլոր հրեական կառույցներն են Բուշին պաշտպանում: Նրանց մեջ զգալի թիվ են կազմում Քերիին պաշտպանողները: Սա մեծացնո՞ւմ է Բուշին հաղթելու հնարավորությունը, թե՞ ոչ: Այսինքն՝ կարելի՞ է ասել, որ «նոր պահպանողականները» կարող են ազդել ընտրությունների ընթացքի վրա:

- Պետք է տեսնել, թե ինչպիսի վերահսկողություն է սահմանվել ամերիկյան զանգվածային լրատվամիջոցների վրա: ԽՍՀՄ-ում դա արվում էր կոպիտ, իսկ նացիստական Գերմանիայում՝ վայրենի ձեւերով: ԱՄՆ-ում գրաքննությունն այնպիսի նրբությամբ է կատարվում, որ քաղաքականությանը հետեւող որեւէ քաղաքացի պարզապես խեղդվում է լուրերի հեղեղից: Օրինակ, Դեմոկրատական կուսակցության համագումարին Նյու Յորքում 500 հազար մարդ փողոց էր դուրս եկել ի նպաստ Ջոն Քերիի, բայց լրատվամիջոցները շրջանցեցին դա՝ չհաղորդելով գեթ մեկ լուր: Աշխարհի անցուդարձին տեղեկանալու համար ստիպված ենք լինում հետեւել «Եվրոնյուսի» հաղորդումներին: Ամերիկյան ժողովրդին զբաղեցնում են սպանության, կողոպուտի, դատավարության լուրերով: Մինչդեռ ժողովրդի ճակատագիրը սերտորեն կապված է աշխարհի քաղաքական կացության հետ: Մենք փաստորեն կտրված ենք աշխարհից:

- Այսինքն՝ ԱՄՆ-ի հրեական լոբբին վարչակարգով, «նոր պահպանողականներով» հանդերձ պաշտպանում է Բուշին, իսկ լրատվամիջոցները հետեւում են նրա օրինակին: Այս դեպքում դուք ավելի բարձր չե՞ք գնահատում Բուշի վերընտրվելու հնարավորությունը, քան ընտրություններում Քերիի հաղթելու:

- Ես, իհարկե, ցանկանում եմ, որ Քերին հաղթի, որովհետեւ Բուշի օգտին էին քվեարկել խոսքի համար, որը գրավոր կերպով ինձ հետ տվել էր նաեւ մեր քաղաքից էդգար Հակոբյանին եւ Վազգեն Սեդրակյանին՝ ասելով. «Ընտրվելու դեպքում հետաքրքիր եմ լինելու Հայոց ցեղասպանության ճանաչմանը»: Բուշը ճիշտ հակառակն արեց, ավելին՝ հայության համար վնասաբեր կեցվածք ընդունեց: Մտավախություն ունեմ, որ Բուշի վերընտրության պարագայում նա Հայաստանի նկատմամբ ավելի բացասական դիրքորոշում ընդունի, մեր հայրենիքը հայտնվի ավելի ծանր կացության մեջ: Ի վերջո Ադրբեջանը զինվում է, անկախ բարիդրացիական մոտեցումներից Վրաստանը սատարում է Հայաստանի շրջափակմանը եւ ռազմական ոլորտում համագործակցում Թուրքիայի ու Ադրբեջանի հետ:

- Պրն Ազատյան, ինչ երաշխիք կա, որ ընտրություններում Քերիի հաղթանակը կփոխի Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը: Այսինքն՝ նա չի՞ շարունակի Հայաստանի եւ Հայոց ցեղասպանության հարցերում այն քաղաքականությունը, ինչ Բուշն է վարում, որովհետեւ այստեղ կարեւորը ոչ այնքան հայ կամ թուրք լինելն է, որքան Վաշինգտոնի համար Թուրքիայի ռազմավարական նշանակությունը:

- Հարցը տեղին է այն առումով, որ անցյալում ԱՄՆ-ի նախագահները բազում խոստումներ էին տվել եւ դրժել: Այս ամենը չի բացառում, որ Քերին եւս չկատարի իր խոստումը: Այդ դեպքում ինչո՞ւ ենք դիտորդվում ի նպաստ Քերիի, որովհետեւ նա Մասաչուսետսում ու Սենատում ավելի քան 20 տարի հայանպաստ գործունեություն է ծավալել եւ հայկական հարցերում ունեցել է դրական վարքագիծ: Սա արդեն ամերիկահայ գաղութի երախտագիտությանն արժանի գործ է: Բուշը Սենատում կամ Կոնգրեսում չի եղել, հետեւաբար ցանկության դեպքում նման գործունեություն չէր կարող ծավալել: Քերիի վերոհիշյալ գործունեությունը նպաստում է, որ հայության համակրանքը նրա օգտին լինի: Բայց դա չի նշանակում, որ բոլոր հայերը կքվեարկեն Քերիի օգտին: Թեեւ դաշնակցական, ռամկավար, հնչակյան մամուլը դիրքավորվել է հօգուտ Քերիի, բայց, դժբախտաբար, ԱՄՆ-ի հայկական գաղութում էջերն են մամուլին հետեւում, ավելի շուտ հեռուստացույց են դիտում, իսկ հեռուստացույցի ազդեցությունը չափազանց մեծ է եւ հաջողությամբ կողմնորոշում է ժողովրդին:

- Պրն Ազատյան, Դուք նշեցիք Հայաստանի նկատմամբ Բուշի ոչ դրական դիրքորոշման մասին: Դա, ըստ երեւույթին, պայմանավորված է Իրաքում եւ տարածաշրջանում ԱՄՆ-ի վարած քաղաքականությամբ: Ձեր կարծիքով, Քերին ընտրվելու դեպքում ունի՞ այդ քաղաքականությունը վերանայելու կամ փոխելու հնարավորություն:

- Քերիի համար փոխելը շատ դժվար է լինելու, Հայկական հարցը՝ մի կողմ, Քերիի եւ Բուշի հակասություններն ամերիկյան ենթատեքստում այնքան մեծ չեն, որքան երեւում են: Քերին ավելի դժվար վիճակում է, քան Բուշը, որովհետեւ վերջինը զորավոր աջակցություն ունի՝ հանձինս հրեաների եւ ծայրահեղ քրիստոնյաների: Մինչդեռ Դեմոկրատական կուսակցությունը բազմաշերտ է նեգրերով, իսպանական ծագում ունեցող ամերիկացիներով, հրեաներով հանդերձ, հետեւաբար նրա համար դժվար է լինելու ողջագրել այնպիսի քաղաքականություն, որ գոհացնի բոլորին:

- Համենայն դեպս, Քերիի հայկական հարցին հետամուտ լինելու պատրաստակամությունը բավականին անհանգստացնում է Թուրքիայի քաղաքական շրջանակներին: Օգոստոսին «Յուրիեթում» Իլթեր Թուրքմենը հոդված էր հրապարակել, որտեղ ընդգծում էր. «Եթե Քերին ընտրվի, ապա շատ դժվար է լինելու նրա միջոցով Հայոց ցեղասպանության բանաձեւերի չեզոքացումը ԱՄՆ-ում »:

- Թուրքերն ԱՄՆ-ի հետ կապված բազմաթիվ շահեր ունեն, եւ դա նրանց համար չթեթեւ է պատճառ հանդիսանա, որ նեղացնեն ամերիկացիներին: Իրենք իրենց անտեղի չափազանցում են Հայկական հարցը, արդյունքում վախեցողի դերում է հայտնվում թուրք ժողովուրդը: Ֆրանսիան ցեղասպանության մասին օրենք է ընդունել, իսկ մենք ԱՄՆ-ում ջանում ենք հասնել ցեղասպանության մասին ընդամենը խորհրդանշական մի որոշման ընդունմանը՝ հարգելու համար մեր զոհերին: Այնպես որ, հայկական բանաձեւերից վախենալու լուրջ պատճառներ թուրքերը չունեն, մանավանդ որ ընտրություններում Քերիի հաղթանակի պարագայում ամեն ինչ պայծառ չի լինելու: Բայց որ Բուշը վերընտրվի, Հայաստանի կացությունն ավելի ծանր կլինի: Օրինակ, Հայաստանը հայտնվել է Իրաք զորք ուղարկելու պարտադրանքի տակ: Զորք ուղարկելով նա վտանգելու է Միջին Արեւելքի ողջ հայությանը: Թեեւ Հայաստանի պետությունը գիտակցում է այս ամենը, սակայն այնպիսի հզոր ճնշումների է ենթարկվում, որ չի կարողանում հակաճառել: ԱՄՆ-ն արդեն մեկուսացրել է Հայաստանին: Ցմոռանանք, որ ԱՄՆ պետքարտուղարը, պաշտպանության նախարարը Ադրբեջան, Վրաստան այցելում է, իսկ Հայաստան՝ ոչ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնյաները թիրախ են դարձել Բաղդադում

Մահմեդական աշխարհում ուրբաթ սկսված ռամադան տոնը նշանավորվեց հակաքրիստոնեական նոր հարձակումներով: Առդեն սպանվել են ամերիկացի 6 զինծառայող, իսկ կիրակի երեկոյան Բաղդադի սրճարաններից մեկի առջեւ ականված ավտոմեքենայի պայթեցումից զոհվել են 7 անձինք:

Շաբաթ օրը Բաղդադում գրեթե միաժամանակ հարձակումների են ենթարկվել քրիստոնեական 5 եկեղեցիներ: «Ֆիգարոյի» թղթակիցը հաղորդում է, որ ահաբեկչությունները թեեւ զոհեր չեն խլել, բայց նյութական զգալի վնաս են պատճառել եկեղեցիներին: Իրաքի բնակչության 2,5 տոկոսը կազմող քրիստոնյա համայնքը ցնցված է: Օգոստոսի 1-ին տեղի ունեցած համանման ահաբեկչություններից զոհվել էր 10 մարդ, 50-ը վիրավորվել էին:

Իրաքի քրիստոնյաներն այսօր խոսում են արտերկրի իսլամիստ առաջնորդներից բխող սպառնալիքի մասին: Շաբաթ օրը Բաղդադում հարձակումների թիրախ դարձած 5 եկեղեցիներից երկուսը քաղդեական են, երկուսը՝ ասորական, մեկը՝ հույն ուղղափառ:

Ժամանակավոր խորհրդարանի՝ Ազգային խորհրդի ասորի անդամ, քրիստոնյա Հիմաթ Հաթիմը իրական եւ միջազգային մահմեդական կառույցներ ոչնչանքերին խնդրել է հատուկ որոշմամբ դատապարտել նման ահաբեկչությունները, որովհետեւ «ընդհանուր ոչինչ չունեն որպիսի հոգեւոր արժեքների եւ հանդուրժողության սկզբունքի հետ»: Նա Իրաքի կառավարությանը հորդորել է «թույլ չտալ իրաքցի քրիստոնյաներին եւ մահմեդականներին գժտեցնող նման գործողություններ»:

Եկեղեցիների դեմ ծրագրված հարձակումները քրիստոնյաներից շատերին ստիպում են հեռանալ եւ բնակություն հաստատել հարեւան Սիրիայում ու Հորդանանում: Բայց քրիստոնյաների մեծ մասը նախընտրում է մնալ Իրաքում, մտնելով, թե հարձակումներն արտերկրի վահաբիստ սունիի առանձնությունների ձեռքի գործն են:

Մինչդեռ այդ ահաբեկչություններից մի քանի օր առաջ Իրաքի իմամ Մուհամադ Բաքիր ալ Ֆայասաղը «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերության եթերում քրիստոնյաներին մեղադրել էր Ռամադանի մզկիթի վրա ամերիկացիների գրոհը չդատապարտելու համար: Ի դեմ, Իրաքի քրիստոնյաները պարբերաբար ամբաստանվում են ամերիկացիների հետ գործակցելու մեջ: Այսինքն՝ իսլամիստների կարծիքով քրիստոնյա լինելն առեն իսկ հանցանք է:

Լիոնի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր Ժոզեֆ Յակոբի խոսքերով, «առնչությունը առկա է Իրաքում. մոլեռանդ իսլամիստները սպառնալիքներով եւ բռնություններով քրիստոնյաներին դրդում են հեռանալ երկրից»: Արտագաղթող քրիստոնյաները միջհամայնքային լարվածության պատճառով դժվարությամբ են կարողանում վաճառել իրենց կալվածները:

Լեհերը մասամբ հանում են զորքերն Իրաքից

Լեհաստանի վարչապետը հայտարարել է, որ հունվարին Իրաքից դուրս կբերվի լեհական ուժերի մի մասը՝ այնտեղ թողնելով 2500 զինվոր, հաղորդում է «Լոս Անջելես թայմսը» հոկտեմբերի 16-ի համարում: Խորհրդարանի իր ելույթում Մարեկ Բելկան խոստացել է. «Մենք Իրաքում չենք մնա մեկ ժամ ավելի, քան պահանջում է խոհեմությունը»:

Լեհերի մտադրությունը կարեւոր է նրանով, որ այս տարվա վերջում կամ 2005 թ. հունվարին Իրաք մեկնող հայ բժիշկների, սակրավորների եւ վարորդների 50 հոգանոց խումբը պետք է մաս կազմի հենց Լեհաստանի վերահսկողության տակ գտնվող Իրաքի կենտրոնական հարավային հատվածի բազմազգ ուժերին: Հայաստանը ցանկություն է հայտնել հումանիտար ոլորտում օժանդակել Իրաքի վերականգնման աշխատանքներին, սակայն քանի դեռ խորհրդարանը հավանություն չի տվել, 50 հոգանոց խմբի մուտքն Իրաք վերջնական չէ:

«Լոս Անջելես թայմսը» հիշեցնում է, որ կոալիցիայի ութ երկրներ՝ Դոմինիկյան Հանրապետությունը, Հոնդուրասը, Նիկարագուան, Նորվեգիան, Ֆիլիպինները, Սինգապուրը, Թաիլանդը եւ Իսպանիան, արդեն զորքերը դուրս են բերել Իրաքից: Եվս չորս պետություններ՝ Ուկրաինան, Մոլդովան, Հոլանդիան եւ Դանիան, քննարկում են Իրաքում զորքերը թողնելու նպատակահարմարությունը:

Լեհ պաշտոնյաները կարծիքներ են հայտնում, որ նախ հնարավոր է Իրաքում կրճատել իրենց զորքերի թիվը 40 տոկոսով, իսկ մինչեւ 2005 թ. վերջը՝ ամբողջությամբ զորքերը դուրս բերել:

Լուկաշենկոն կկարողանա՞ 3-րդ անգամ նախագահ ընտրվել

Մինսկում ծեծել են ՕՊՏ-ի աշխատակցին

Բելառուսում կիրակի օրն անցկացված հանրաքվեի արդյունքները թույլ են տալիս երկրում վերացնել նախագահական կառավարման ժամկետի սահմանափակումները: Այսպիսով, Ալեքսանդր Լուկաշենկոն կարող է 3-րդ անգամ իր թեկնածությունն առաջադրել նախագահի պաշտոնում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավար Լիդիա Երմոշինան հայտարարել է, թե ընտրողների 77 տոկոսը քվեարկել է նախագահական կառավարման ժամկետի սահմանափակումների վերացման օգտին: Արգելքը չեղյալ հայտարարելու համար պահանջվում էր առնվազն 50 տոկոս: Կիրակի, ժամը 18-ին քվեարկությանն առեն մասնակցել էր բոլոր ընտրողների 81,3 տոկոսը:

Հանրաքվեից բացի, Բելառուսում անցկացվում են նաեւ խորհրդարանական ընտրություններ: BBC-ի տվյալներով, դրանց ընթացքին հետեւում են ԵԱՀԿ 300 եւ ԱՊՀ 250 դիտորդներ: Նրանցից ոմանք նշում են, որ ընտրություններն անցնում են մի շարք խախտումներով: Բայց Բելառուսի ԿԸՀ-ում հիմնազուրկ են համարում այդ մեղադրանքները:

Անկախ դիտորդները Բելառուսի ընտրական օրենսգրքի խախտում են համարում մասնավորապես այն փաստը, որ հանրաքվեի պաշտոնական ավարտից մի քանի ժամ առաջ հրապարակվել են տեղամասերից դուրս եկած ընտրողների հարցումների տվյալները: ԿԸՀ նախագահը հավաստիացնում է, թե դրանում որեւէ խախտում չկա:

Միաժամանակ հաղորդվում է, որ հանրաքվեի օրը Մինսկում հիվանդանոց է տարվել Ռուսաստանի հանրային հեռուստաընկերության՝ ՕՊՏ-ի հատուկ նախագծերի ղեկավար Պավել Շերեմետը: Բժիշկները կարծում են, որ նա գլխուղեղի վնասվածք է ստացել: Ականատեսները պատմել են, որ կիրակի երեկոյան Շերեմետին ծեծել են երկու անհայտ անձինք: Դրանից հետո ոստիկանությունը նրան կալանավորել է՝ ամբաստանելով խուլիգանության մեջ:

Դուշանբեում բացվեց ռուսական ռազմակայան

Ռուսաստանը դարձյալ «Կենտրոնասիական համագործակցության» անդամ

Տաջիկստանում երեկ սկսվել է «Կենտրոնասիական համագործակցություն» կազմակերպության ընդլայնված նիստը: Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ նիստին մասնակցել է նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Նիստի հենց սկզբում Ռուսաստանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի նախագահները ստորագրել են արձանագրություն Ռուսաստանին «Կենտրոնասիական համագործակցության» մասնակից դարձնելու վերաբերյալ:

«Կենտրոնասիական համագործակցությունը» հիմնվել է 2002 թ. փետրվարի 28-ին Ղազախստանի, Կիրգիզիայի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի կողմից: Այն փոխարինում է ավելի վաղ լուծարված «Կենտրոնասիական տնտեսական համագործակցություն» կազմակերպությանը:

«Կենտրոնասիական համագործակցության» գլխավոր նպատակներն են բոլոր բնագավառներում մասնակից երկրների բազմակողմանի համագործակցության եւ փոխգործողության զարգացումը, տարածաշրջանում կայունության ապահովման արդյունավետ համակարգի ստեղծումը եւ միասնացման խորացումը:

Միաժամանակ հաղորդվում է Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում ռուսական ռազմակայանի բացման մասին: BBC-ն նշում է, որ կիրակի օրը բացման արարողությանը ներկա են եղել Ռուսաստանի եւ Տաջիկստանի նախագահները:

Սա ռուսական երկրորդ ռազմակայանն է Կենտրոնական Ասիայում. անցյալ տարի ռուսական ռազմակայան էր բացվել Կանտում (Կիրգիզիա): Տաջիկական կողմի հետ բանակցություններն սկսվել էին 5 տարի առաջ: Ի դեմ, Դուշանբեի օդանավակայանի մի մասն այժմ ՆԱՏՕ-ի վերահսկողության տակ է. այնտեղ կան ամերիկացի եւ ֆրանսիացի զինվորական օդաչուներ:

Ռուսական նոր ռազմակայանի հիմքը կազմում է 201-րդ մոտոհրաձգային դիվիզիան, որը 2-րդ աշխարհամարտից հետո տեղաբաշխված է Տաջիկստանում: Պաշտոնական Դուշանբեն քանիցս հայտարարել է, որ 201-րդ դիվիզիայի ներկայությունը նպաստում է ոչ միայն Տաջիկստանի, այլեւ ամբողջ Կենտրոնական Ասիայի անվտանգությանը:

ԹԲԻՊՍՏՈՒՄ

Երուսաղեմի Հին քաղաքի հրեա ռաբբիները ներողություն են խնդրել Երուսաղեմի հայ համայնքից

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի լուսարար Նուրհան արքեպիսկոպոսի եւ խաչի վրա հրեա ռաբբիի թքելու պատմությունը բացասական արձագանք ունեցավ իսրայելական, հայկական ու միջազգային մամուլում, քանի որ երեւույթը կրում էր հակաքրիստոնեական բնույթ եւ ուղղված էր ոչ միայն հայերի դեմ: Ինչպես գրել էինք մեր նախորդ տողերից մեկում, Թարգմանչաց տոնի օրը, հոկտեմբերի 10-ին Երուսաղեմի Հին քաղաքում հայերի կրոնական ծիսակատարության ժամանակ տեղի ունեցած միջադեպից հետո Նուրհան սրբազանը Իսրայելի կառավարությանը մեղադրել էր Իսրայելի քրիստոնյաների նկատմամբ դրսեւորած խիստ անտարբեր վերաբերմունքի համար, միաժամանակ հայտարարելով, որ հոգեւորականներն անկարող են հանդուրժել խաչի վրա թքելու նվաստացումը:

Իսրայելական «Հարեց» թերթի երեկվա համարից տեղեկացանք, որ Երուսաղեմի Հին քաղաքի «Հար Համոր» կրոնական ուսումնական հաստատության ռաբբիները ներողություն են խնդրել հայ համայնքից հրեաների կողմից խաչի վրա թքելու նվաստացման համար: Հանդիպումը տեղի է ունեցել ոստիկանության Հին քաղաքի բաժանմունքում, որը գտնվում է Յաֆայի դարպասից հայկական եւ հրեական թաղամասեր տանող ճանապարհի վրա: Ներկա է եղել նաեւ ուսանողը՝ Նաթան Ցվի Ռոզենտալը, որն իր արարքը բացատրել է սացած կրոնական դաստիարակությամբ, համաձայն որի քրիստոնեությունը համարվում է կռապաշտություն: Ռաբբիները նախ ցավ են հայտնել կատարվածի համար, ապա ընդգծել, որ դա առաջին դեպքն է: Նրանց ասելով, «Հար Համորը» էլիտար կրոնական հաստատություն է, որը բարձր է գնահատում հասարակության ուստրա օրթոդոքս ազգայնական խավը:

Թթողը

Նուրհան արք. Մանուկյանն ասել է, որ ինքը ներում է Ռոզենտալին, քանի որ դա բխում է քրիստոնեության էությունից ու պատգամներից:

Ինչպես նշում է «Հարեցը», հանդիպումը կայացել է հինգշաբթի, սակայն ոստիկանությունը որոշել է այդ մասին որեւէ տեղեկություն չհաղորդել: Ոստիկանության խոսնակը հայտնել է, որ հայ համայնքից ռաբբիների ներողություն հայցելը որեւէ ազդեցություն չի ունենա Ռոզենտալի գործի դատի կայացման վրա: Նա դեմ մեղադրական եզրակացություն կազմելիս:

Քնեսեթի (Ազգային ժողով) ներքին հարցերով զբաղվող հանձնաժողովը կիրակի արտահերթ նիստ է հրավիրել քննարկելու քրիստոնյա հոգեւորականների դեմ հրեա օրթոդոքսների կատարած չարամիտ արարքները, որոնց անդրադարձել է «Հարեց» թերթը: Նիստին հրավիրվել են քրիստոնյա հոգեւորականներ, Իսրայելի տարբեր նախարարությունների ներկայացուցիչներ, Երուսաղեմի քաղաքապետարանի ղեկավարներ, նկատի ունենալով խնդրի բարդությունն ու ծավալը, որի մասին ցույց է հաղորդվում ոստիկանությանը: Հին քաղաքում հրեական կրոնական հաստատությունների կողքին գործող եկեղեցու սպասավորները բողոքել են իրենց հանդեմ հրեա կրոնավորների միտումնավոր արարքներից եւ վերաբերմունքից: Մի կողմից նշվել են քրիստոնեական եկեղեցիների դեմ ընդվզելու նոր դեպքեր, մյուս կողմից՝ պաշտոնյաներից մեկը հայտարարել է, որ վերջին մի քանի տարիներին ոստիկանությունում գրանցվել է ընդամենը 3 բողոք: «Թող որեւէ մեկը չակնկալի, որ ամեն մի հոգեւորականի կցելու ենք մեկ ոստիկան», ասել է նա:

Քնեսեթի ներքին հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Յոսի Շահանը շեշտել է, որ Իսրայելի կրթական համակարգում քրիստոնեության դասավանդումը կարիք ունի բովանդակային փոփոխությունների: Այդ նպատակով որոշում է կայացվել կրթության նախարարության հետ առաջիկայում հրավիրել ֆորում՝ քրիստոնյա եւ հրեա հոգեւորականների մասնակցությամբ:

Չմոռանանք նշել, որ Երուսաղեմի քրիստոնեական համայնքը վերջին դեպքի առիթով դիմել է Իսրայելի կառավարությանը, պահանջելով միջոցներ կիրառել իրենց նկատմամբ հրեա օրթոդոքսների ուժգնացող հետապնդումները կանխելու համար: Հայ եկեղեցու եպիսկոպոս Արիս սրբազանն ասել է. «Մեծամասնությունը բարեկիրթ է կամ անտարբեր: Խնդիրը խիստ կրոնական է: Դա կրթության հետ է կապված: Ինչ կրթություն պիտի սացած լինեին նրանք, այդկերպ վարվելու համար»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Տեսախցիկներ ռուս-վրացական սահմանում

Ռուսաստանը ռուս-վրացական սահմանի մի հատվածում՝ Կարաչայ-Չերքեզիայի լեռներում տեղակայել է դիտարկման հատուկ համակարգեր: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել է ՌԴ ԱԴԾ Հյուսիսային Կովկասի շրջանային սահմանապահ վարչության մամլո ծառայության պետ Սերգեյ Լիվանցովը:

Փոխգնդապետ Լիվանցովի խոսքերով, ռուս սահմանապահները մտադիր են նման համակարգեր տեղակայել ռուս-վրացական սահմանի նաեւ չեչենական, ինգուշական, դաղստանյան հատվածներում:

Տեսախցիկների տեղաբաշխման կոնկրետ վայրերը չեն հաղորդվում: ԱԴԾ-ում լոկ նշել են, որ մշտական տեսահսկողության տակ են առնվում հատկապես դժվարամատչելի ժայռոտ տեղանքները, որոնք մինչեւ վերջերս վերահսկվում էին օդուժի թռիչքներով եւ լեռնագնաց սահմանապահների հետախուզական կարգախմբերի ուժերով:

Ծաղկաքերթին իջած սերը

Արմինե Կալենցի «Ծաղիկներ Անի Նիկոլին» ցուցահանդեսում

Ամեն ազնիվ ստեղծագործում արարչագործության մի շարունակություն է երկրի վրա: 80-ն անց նկարչուհին իր հոգու ծաղիկներն իբրեւ ընծա աշխարհ էր հանել: Գեղարվեստի ակադեմիայի «Ալբերս եւ Թովէ Բոյաջյան» ցուցասրահում բացված գարունն այդ փոքր տարածը վերածել էր գեղեցկաբույր պարտեզի: «Ծաղիկներ Անի Նիկոլին» Արմինե Կալենցի ընծան թոռնուհուն իր հոգու ճնշումներից հյուսած ծաղկաբույլն էր՝ փռված մարդկանց

«Ինքնանկար»

հայացքի առաջ: Նկարչուհին շրջապատված էր թարմ ծաղկեփնջերով. դրանք նա գրեթե չէր տեսնում, ցուցասրահի պատերին իր կյանքի ծաղիկներն էին՝ իր ապրած օրերի գեղեցկությունները, ուրախությունները, տխրությունները ու զոհումները, ափսոսանքներն ու ցավերը. ամեն մի օր ասես մի ծաղիկ դարձած՝ հավաքված ցուցասրահում: Ուշադիր աչքն ամեն ծաղկի մեջ փնտրում էր մի հուշ, մի գաղտնիք, սիրո մի շունչ. դրանք տրամադրություններ էին գունաշխարհային բազմազանությամբ:

Այս անգամ նկարչուհին իր հոգում զարթնած ծաղկանց սիրով ու գույներով էր խոսում աշխարհի հետ ու դիտարկու աչքը գույնի հետ զուգի բռնվելով՝ լսում էր նկարչուհուն, փորձում զգալ, թե այդ ինչ ներքին ուժ է օգնել արվեստագետին դուրս գալու ֆիզիկական, առողջական ծանր վիճակից ու աշխարհը տեսնելու գունային այսպիսի շեղությամբ: Ճերմակազգեստ, ճերմակավարս նկարչուհին այնպես ձուլված էր իր ստեղծագործություններին, ու ինքն էլ ասես մի ծաղիկ լիներ:

Սարո Կալենցը նկարչուհու պատկերագրին մակագրություն էր թողել՝ «Սա իմ մայրիկն է, որ նկարում է ձեզ համար»: Ու այս ցուցահանդեսը գրեթե անհավանական է թվում, երբ որդին սկսում է պատմել դրան նախորդած նկարչուհու հիվանդության մասին: Ուրի գործողությունից, կաթվածից, մեկ աչքի կուրությունից հետո 2 տարվա մեջ Արմինե Կալենցը շատ դժվարություններով կարողացել է իր մեջ ուժ գտնել եւ նկարել (նկարներն արված են նոր տեխնիկայով՝ պաստելով): Ստեղծագործելու կամքը եւ արվեստի նկատմամբ սերն է, որ նրան վերադարձրել է կյանք, ծաղիկների միջոցով նոր իմաստներ հաղորդել:

«Այս ծաղիկները նրա կենսունակության, երիտասարդության վկայությունն են: Ինքը մի ժամանակ շատ սիրում էր նկարել քարեր, ու դրանց մեջ սիրտ ու հոգի կար: Քար եւ ծաղիկ: Այդ երկու լռությունների խորհում Կալենցը կարողանում է դնել մարդկային հոգեբանություն, հայ մարդու հոգեմտածողություն, դրա համար նրա արվեստը խորունկ է, մեծ լիցքեր է տալիս մեր կերպարվեստին: Լինելով Հարություն Կալենցի կինը, նա պակաս հետաքրքրական չէ, իր որդին եւ թոռը նույնպես նկարիչներ են եւ պահպանում են ընտանեկան ավանդույթները: Մեծ է նրա մայրական բարությունը, լույսը, ներսից եկող ջերմությունը, որ կարողանում է տալ իր ընտանիքին, իր գեղանկարչությանն ու արվեստասերներին» (Արեւշատ Ավագյան, բանաստեղծ, նկարիչ):

«Իր այս գործն անակնկալ չէր այն իմաստով, որ շարունակությունն է, ինչ տասնամյակներ արդեն անում է: Ինքը մեր անվանի նկարիչներից է եւ հաճելի է, որ չնայած առաջացած տարիքին եւ թույլ առողջությանը, կշարունակի ստեղծագործել: Սա կնշանակի, թե ինքը առանց արվեստի չի կարող ապրել: Ցուցահանդեսն ապացույց է, որ նա անդադար ապրում է արվեստով» (Հակոբ Հակոբյան, նկարիչ):

Ծննդավայրի՝ սիրիական անապատների կիզիչ արեւի միրաժները Արմինե Կալենցին տրամադրել են հայեցողության, Հայաստանի բնությունը, քարն ու լեռները նրա մեջ իբրեւ սիրո մի նոր երանգ են բացվել: «Ես սիրեցի Հայաստանի քարը, որն արեւի լույսի փոփոխության հետ կարծես շարժվում ու կյանք է ստանում»: Հայաստան երկրի բնության, պատմության, ազգային ոգու ներշնչանքով նրա ստեղծած գեղանկարչական աշխարհին՝ «Առավոտ լուսո», «Մեծ ռեքվիեմ», «Կանչ ու կլինեմ», վերջին տարիների՝ «Ցնցում», «Աղոթք», «Որոնում» եռագյան, բանաստեղծ, նկարիչ):

«Իր այս գործն անակնկալ չէր այն իմաստով, որ շարունակությունն է, ինչ տասնամյակներ արդեն անում է: Ինքը մեր անվանի նկարիչներից է եւ հաճելի է, որ չնայած առաջացած տարիքին եւ թույլ առողջությանը, կշարունակի ստեղծագործել: Սա կնշանակի, թե ինքը առանց արվեստի չի կարող ապրել: Ցուցահանդեսն ապացույց է, որ նա անդադար ապրում է արվեստով» (Հակոբ Հակոբյան, նկարիչ):



«Ծաղիկներ Անի Նիկոլին»

Պրոֆեսիոնալ նախկին կարողությունն օգնեց ինձ ճշելու անորոշ տեսածս, որովհետեւ ընդհանուր եմ տեսնում: Ինձ մոտ հիմա հաղթանակում են կարմիր գույները, յուրօրինակ ճառագայթում են սանում աչքերս դրանցից»:

Արմինե Կալենցը վերջին տարիներին նկարելուն զուգահեռ նաեւ գրել է գրքեր՝ «Ներիր ինձ, Հարություն...» եւ «Մտորումներ»: «Կնոջ համար կյանքն ընդհանրապես բարդ պատմություն է, միակ բանը, որ պակասում է արվեստագետ կանանց իբրեւ կին անկեղծ լինելն է: Ես մտածում էի գրելիս, որ պետք է հաղթահարեմ դա եւ անկեղծ պիտի լինեմ:

Վերջին գիրքը երեք տարի առաջ գրեցի, երբ աչքերս դեռ տեսնում էին: Այս վերջինը չի վերաբերում ամուսնական կյանքիս, արվեստագետ կնոջ մասին է, եւ նույնքան անկեղծ եմ, որքան նախորդում»:

Նկարչուհին շարունակում է ապրել ծաղիկների ներշնչանքով, իսկ հետո. հետո «Ասված գիտի, թե նոր սերն ինչ պիտի տա ինձ», ասում է:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հպարտությամբ, նաեւ տագնապով

Հայ մշակույթը ներկայացվում է Էմիրություններում



Երեւանում է Արաբական Միացյալ Էմիրությունների Հայկական մշակութային ընկերակցության ատենապետ Անդրանիկ Տաղլյանը: Նա չի եկել որպես զբոսաշրջիկ: Հայաստանի եւ ԱՄԷ-ի միջեւ մշակութային կապերի հաստատմանը ծառայած, 10-ամյա կենսագրություն ունեցող ընկերակցության ղեկավարն այս անգամ եկել է որպես ԱՄԷ-ի մշակույթի նախարարության մշակույթի, արվեստի եւ տեղեկատվության վարչության տնօրեն (փաստորեն այս պաշտոնը հավասարվում է փոխնախարարի պաշտոնին), Իիյդ Ֆարաջի, դաշնակահար Սուլթան ալ Խաթիբի եւ ուդահար Սուլթան ալ Ջաբեյթիի հետ: Երկու երիտասարդ երաժիշտները հայ ունկնդրին ներկայացրին այս երկրի կատարողական արվեստը՝ համաշխարհային դասական եւ արաբական ազգային երաժշտություն:

Մեր զրույցի ժամանակ Անդրանիկ Տաղլյանը նշեց, որ էմիրությունների գրեթե 450 մարդ ունեցող հայ գաղութը ոչ միայն համախմբված ու ազգային արժեքների պահպանման գործին նվիրված մի կազմակերպություն է, այլեւ աշխատում է հայ-արաբական կապերի հաստատման համար:

Հայկական մշակութային ընկերակցության հիմնադրման կամ ավելի ճիշտ՝ ծննդյան թվականը փաստորեն պետք է կապակցվի 1988 թ. դեկտեմբերի Սպիտակի եւ Լենինականի երկրաշարժին հաջորդած օրերին, երբ Միացյալ Էմիրություններ մեկնեցին հայրենի արվեստագետների մի ընտրանի՝ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, երգչուհի Լուսինե Զաքարյանը, կոմպոզիտոր Արամ Սաթյանը, աստուծող Լալա Մնացականյանը, երիտասարդ երգչուհիներ եւ կատարողներ: Այս արվեստագետներն այդ օրերին միայն ԱՄԷ-ում իմացան, թե ինչ է կատարվել մայր հայրենիքում: Եվ հասկանալի է, թե ինչ ոգով ու տրամադրությամբ նրանք տեղի հայերին ու արաբներին եւ մեկ անգամ պիտի ապացուցեին հայերի ու Հայաստանի անմահությունը:

Երկրաշարժից կարճ ժամանակ անց, 1989 թվականին մշակութասեր մի քանի երիտասարդներ, հանձինս ճարտարապետներ Անդրանիկ Տաղլյանի, Վարդան Ինկիլիզյանի, լիբանանահայ ճանաչված գրող Արամ Սեփեթճյանի, նմանատիպ ճարտարապետներ Վաչե Գասեմճյանի եւ Թադիկ Մանգասարյանի, հայ մշակույթին ծառայելու պատրաստակամությամբ եւ ներքին կարողությունների դրսեւորման ցանկությամբ սկսեցին իրենց գործունեությունը:

- Արաբական հսկա անապատում թվով փոքր բնակավայրեր կային, եւ ամեն մի բնակավայրում, հատկապես՝ Աբու Դաբիում, Դուբայում եւ Շարժայում հայեր կային,- ասում է ծնունդով բեյրութցի եւ Երեւանում ճարտարապետություն ուսանած Անդրանիկ Տաղլյանը:- Մենք շատ լավ գիտեինք, որ 1915 թվականին Հայկական եղեռնից հետո այս անապատներում ապրող արաբները եւ տեղ ու օթեւան էին տվել արհավիրքից մազապուրծ հայ խլյակներին: Ու գրեթե 80 տարի հայ մարդն այստեղ եւ պահպանել էր իր ազգային կերպը՝ իր բարոյականությունը, մշակույթը, ազգային կերպարը: Այս ամենը եւ ամենքին համախմբելու խնդիր ունեինք:

Ճիշտ է, հետաքրքիր չէր մշակութային ընկերակցության ստեղծման խնդիրը լուծել, որովհետեւ միայն հրավիրված հոգեւոր հովիվով, ներքին մասնասվածության պատճառով ընդհանրապես չափազանցություն կլիներ հայ գաղութը պահել: Եվ երիտասարդները դիմեցին հայրենիքի արվեստագետներին, ճանաչված մարդկանց՝ իրենց հոգեւոր զորակցություն ցուցաբերելու համար: Բացի վերոհիշյալ հայրենի արվեստագետներից, տարբեր տարիներին ԱՄԷ այցելեցին նաեւ սփյուռքահայ արվեստագետ Վազգեն Թութունջյանը, ակադեմիկոս, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, իրանահայ բանաստեղծ Խաչիկ Խաչերը, ճանաչված երաժիշտներ Սվետլանա Նավասարդյանը, Ջիվան Գասպարյանը, Ռաիսա Մկրտչյանը... 1995-ի ապրիլին եւ 1997-ի մայիսին այս երկրում հաջողությամբ հանդես եկավ Կոմիտասի անվան քառյակը, 1998-ին եւ 2002-ի՝ Արամ Ղարաբեկյանի ղեկավարած Հայաստանի ազգային նվագախումբը: 1998-ին մայրաքաղաքում եւ մյուս բնակավայրերում հաջողությամբ անցկացվեցին «Հայկական մշակույթի շաբաթ» խորագրով մի շարք միջոցառումներ: Այս տարի ԱՄԷ-ում հրաշալի համերգ տվեց Երեւանի սիմֆոնիկ նվագախումբը:

- ՀՄԸ-ի հաջողությունների համար պարտական ենք հայրենի արվեստագետներին,- ասում է պարոն Տաղլյանը:- Սակայն շատ փոքր բան կկարողանայինք անել, եթե ժամանակին մեզ չաջակցեին հայրենի իշխանությունները: Ժամանակին դա արվում էր սփյուռքահայության հետ կապի կոմիտեի, իսկ այժմ՝ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի ջանքերով:

Եվ այսօր, եթե արաբական այս բարեկամ երկրում հայոց փոքրաթիվ, բայց կազմակերպված գաղութը կարողանում է հայ արվեսը, մշակույթը, հայ ինքնությունը հպարտությամբ պահպանել, պարտ ենք Անդրանիկ Տաղլյանին եւ նրա ընկեր-բարեկամներին, ովքեր արդեն 10 տարի առավել նպաստակասլաց ու ազգանվեր գործունեություն են ծավալել:

Պարոն Տաղլյանի հետ մեր զրույցի ժամանակ չէինք կարող չխոսել նաեւ մեկ հարցի մասին, որն այստեղ՝ Հայաստանում մեզ ցավ է պատճառում: Գաղտնիք չէ, որ այժմ որոշ հայտիներ էմիրություններ են մեկնում ոչ միայն առեւտուր անելու եւ վերադառնալու համար, այլեւ հայ աղջկան ու հայ կնոջը ոչ տիպական մտադրությամբ: Խոսքը մարմնավաճառության մասին է, որոնց մասին առանձին տեղեկատվություններ են լինում նաեւ տեղիս ոստիկանական տեղեկագրերում: Անդրանիկ Տաղլյանը չի շրջանցում այս մտահոգությունը, սակայն դա բացատրում է հայրենի իշխանությունների, հատկապես իրավապահների եթե չասենք թույլվությամբ եւ ակամա աջակցությամբ, ապա գոնե՝ անհոգությամբ:

- 1915 թվականից առ այսօր,- ասում է Տաղլյանը,- ինչպես աշխարհի շատ ու շատ երկրներում, ուր հայկական գաղութներ եւ համայնքներ են ստեղծվել, այնպես էլ Արաբական Միացյալ Էմիրություններում հայերս շատ բան ենք արել հայ մարդու վեհ կերպարը, հայի բարձր նկարագիրը պահպանելու համար: ԱՄԷ-ի հնաբնակներն այստեղ եւ հայի ճշմարիտ կերպարի ջատագովներն են եղել: Բայց այսպիսի մեկ-երկու դեպքը շատ բանով կարող է վնասել մեր ինքնության ճշմարիտ գնահատականին:

Այժմ, երբ Անդրանիկ Տաղլյանի եւ նրա բարեկամների շնորհիվ արաբական այս երկրում պատվի ու հարգանքի ենք արժանացել, պետք է ամեն ինչին խիստ վերաբերվենք: Մի քանի նվիրյալների աշխատանքը չպետք է ջուրը գցել:

ՄԵՐԳԵՆ ԳԱԼՈՅԱՆ

ԾԱՂԻԿՆԿԱՐՅԻ ԱՅՔԵՐՈՎ



Հայ շախմատիստներն առաջատարների շարքում են

Իսպանիայի Կալվիա խաղաքաղաքում մեկնարկած շախմատի համաշխարհային 36-րդ օլիմպիադայում կայացել է երեք տուր: Մեկնարկային տուրերում բավական հաջող է հանդես գալիս Հայաստանի տղամարդկանց հավաքականը: Առաջին տուրում մեր շախմատիստները 3,5–0,5 հաշվով պարտության մատնեցին Մոնղոլիայի հավաքականին: Առաջին խաղատախտակի վրա Ռաֆայել Վահանյանի մրցակիցը չներկայացավ հանդիպմանը եւ վերջինիս պարտություն գրանցվեց: Հաղթանակներ տոնեցին Սմբատ Լպուտյանն ու Գաբրիել Սարգսյանը, իսկ Արտաշես Մինասյանը ոչ-ոքի խաղաց: Հաջորդ տուրում մեր թիմը մրցեց ուզբեկների հետ եւ հաղթեց 3–1 հաշվով: Առաջին խաղատախտակի վրա հանդես եկող Լեւոն Արոնյանը պարտության մատնեց Յուզասովին, Լպուտյանը հաղթեց Բարսովին, իսկ Սարգսյանն առավելության հասավ Եգինի նկատմամբ: Ցավոք, չորրորդ խաղատախտակը ներկայացնող Արտաշես Մինասյանը պարտվեց Գարեեւին: Երրորդ տուրում էստոնացիների հետ մրցախաղում կրկին գրանցվեց 3–1 հաշիվ: Մեր թիմին հաղթական միավորներ բերեցին Վահանյանն ու Սարգսյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Կուլառսոին եւ Վայնգոլդին, իսկ Արոնյանն ու Մինասյանը խաղաղ դաշն կնքեցին համապատասխանաբար Էլվեսի եւ Կանեպի հետ: Երեկ, ուշ երեկոյան մեր շախմատիստները չորրորդ տուրում մրցեցին Բոսնիայի հավաքականի հետ: Ըստ խաղատախտակների, պայքարի մեջ ներգրավվեցին Արոնյանը, Վահանյանը, Լպուտյանն ու Մինասյանը:

Երեք տուրից հետո Հայաստանի տղամարդկանց հավաքականը 9,5 միավորով ընթանում է վեցերորդ տեղում: Առաջատարն Ուկրաինայի հավաքականն է, որը ցույց է տվել 100 տոկոսանոց արդյունք (12 միավոր)՝ միեւնույն 4–0 հաշվով պարտության մատնելով Ինդոնեզիայի շախմատիստներին եւ Իսպանիայի երկրորդ հավաքականին: Երրորդ տուրում ուկրաինացիները նույն հաշվով առավելության հասան 100 տոկոսանոց արդյունք ունեցող չեխերի նկատմամբ: 2–4-րդ տեղերը 10,5-ական միավորով բաժանում են Իսրայելի, Բուլղարիայի եւ Ռուսաստանի հավաքականները: Նշենք, որ Հայաստանի հավաքականի կազմում առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Հայաստանի անցյալ տարվա չեմպիոն Գաբրիել Սարգսյանը, որը հաղթանակով է ավարտել անցկացրած երեք պարտիաներն էլ: Նրանից հետ չի մնում փորձառու Սմբատ Լպուտյանը, որն անցկացրած երկու հանդիպումներում էլ հաղթել է: Իր թիմին երկու միավոր է պարգեւել նաեւ Ռաֆայել Վահանյանը: Լեւոն Արոնյանը երկու պարտիաներում վաստակել է 2 միավոր, իսկ Արտաշես Մինասյանի արդյունքն է 1 միավոր 3 հնարավորից:



Անսպասելիորեն անհաջող մեկնարկեց Հայաստանի կանանց հավաքականը՝ 1–2 հաշվով զիջելով Մալայզիայի շախմատիստուհիներին: Մեր թիմին միակ միավորը պարգեւեց առաջին խաղատախտակի վրա հանդես եկող Լիլիթ Մկրտչյանը, իսկ ահա Նելլի Աղինյանն ու Սիրանուշ Անդրեասյանը զիջեցին մրցակիցներին: Երկրորդ տուրում մեր շախմատիստուհիները վերելքով հանդես եկան՝ Գվատեմալայի հավաքականի հետ բոլոր երեք պարտիաներն էլ ավարտելով իրենց օգտին: Հաղթանակներ տոնեցին Դանիելյանը, Աղինյանն ու Անդրեասյանը: Երրորդ տուրում Շվեյցարիայի հավաքականի հետ մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1,5–1,5: Էլինա Դանիելյանը հաղթեց Տատյանա Լեմաշկոյին, Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Բարբարա Հունդի հետ, իսկ Սիրանուշ Անդրեասյանը պարտվեց Գունդուլա Հայնաթսին: Երեք տուրից հետո մեր հավաքականը 5,5 միավորով 28-րդ տեղում է: Առավել հաջող է հանդես գալիս Էլինա Դանիելյանը, որը երկու պարտիաներում էլ հաղթել է: Լիլիթ Մկրտչյանը 2 հնարավորից վաստակել է 1,5 միավոր: Նելլի Աղինյանն ու Սիրանուշ Անդրեասյանն իրենց օգտին գրանցել են 1-ական միավոր: Կանանց մրցաշարում առաջատարի դերը 8,5-ական միավորով ստանձնել են Գերմանիայի եւ Չինաստանի հավաքականները: Նրանցից 1-ական միավորով հետ են մնում ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Հունգարիայի շախմատիստուհիները:

ՀՄԱԿ-ի լեռնագնացները նվաճեցին Արարատի գագաթը

Թեհրանում լույս տեսնող «Ալիֆ» օրաթերթից ստացված տեղեկատվության համաձայն, հոկտեմբերի 10-ի կեսօրին, չնայած անբարենպաստ եղանակին, ՀՄ «Արարատ» կազմակերպության լեռնագնացների ներկայացուցչական խումբը նվաճել է Արարատ լեռը՝ ՀՄԱԿ-ի 60-ամյակի գերը տեղադրելով հայության սիրտը համարվող լեռան գագաթին:

Սույն թվականի հոկտեմբերի 6-ին ՀՄԱԿ-ի լեռնագնացների ներկայացուցչական խումբը Թեհրանից ցամաքային ճանապարհով մեկնել էր Թուրքիա՝ իրականացնելու նույն կազմակերպության 60-ամյակին նվիրված «Արարատի» հետ մինչեւ Արարատ կարգախոսը: Ալպինիստական խմբում ընդգրկված էին Սուրեն Ստեփանյանը, Քաթրին Հակոբյանը, «Արարատի» 60-ամյակի առիթով կյանքի կոչված խմբի մարզիչ Մոհամմադ Նուրին եւ նրա օգնական Ախբար Շանդիզին: Լեռնագնացներն ուրբաթ առավոտյան Բայազետ քաղաքից մեկնել են Թոփչաթան գյուղ՝ բարձրանալու Մասիսի գագաթը: Հոկտեմբերի 8-ի գիշերը նրանք տեղավորվել են 3 հազար մետր բարձրության վրա գտնվող առաջին ճամբարում: Հաջորդ օրը նրանք տեղադրել են իրենց երկրորդ ճամբարը 4200 մետր բարձրության վրա, իսկ կիրակի առավոտյան սկսել են վերելքը եւ նվաճել Արարատի գագաթը:

Մորենտեսը պատրաստ է տեղափոխվել «Լիվերպուլ»

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Ֆեռնանդո Մորենտեսը, որն անցյալ մրցաշրջանում վարձավճարով հանդես էր գալիս ֆրանսիական «Մոնակոյում», վերադառնալով «արքայական ակումբ», կրկին ոչ միշտ է տեղ գտնում թիմի հիմնական կազմում: Այդ իսկ պատճառով նա դեմ չէ այլ ակումբ տեղափոխվել: Մորենտեսով հետաքրքրվում է «Լիվերպուլի» իսպանացի մարզիչ Ռաֆայել Բենիտեսը: Իսպանացի հարձակվողի խաղը գրավել է Բենիտեսի ուշադրությունը, եւ նա ամեն ջանք կգործադրի ֆուտբոլիստին թիմ հրավիրելու համար: Մորենտեսն էլ պատրաստ է հանդես գալ «Լիվերպուլում»: Նրա կարծիքով, դա հիանալի հնարավորություն է խաղային ռակետիկա ձեռք բերելու համար: Բացի այդ, Մորենտեսը գտնում է, որ «Լիվերպուլում» հանդես գալը մեծ պատիվ է ցանկացած ֆուտբոլիստի համար: Հնարավոր է, որ ձմռանը, երբ Եվրոպայում կսկսվի տրանսֆերային շրջանը, «Ռեալը» Մորենտեսին տրամադրի անգլիական ակումբին:

Վերջին հնարավորությունը

Բրիսբեյնում ընթացող Կրամնիկ-Լեկո մրցախաղի ավարտին մնացել է մեկ տուր: Իսկ դա նշանակում է, որ Կրամնիկին ընդամենը մեկ հնարավորություն է մնացել պարտությունից խուսափելու համար: Նախավերջին տուրում ռուս շախմատիստը մեկ անգամ եւս փորձեց հասնելու հաջողության, սակայն Լեկոն այս անգամ էլ հսկայ խաղաց եւ կարողացավ պարտիան ավարտել իրեն ձեռնտու ոչ-ոքի արդյունքով: Այսպիսով, 13 տուրից հետո 7-6 հաշվով մրցախաղը շահում է Պետեր Լեկոն:

Ողբերգական դեպք Կաունասում

Վերջին շրջանում հաճախակի են դարձել մարզիկների մահվան դեպքերը մրցումների ժամանակ: Նման ողբերգական մի դեպք էլ գրանցվեց Կաունասում «Ժալգիրիսի» եւ «Ասլետասի» բասկետբոլային հանդիպման ժամանակ: Խաղի ընթացքում «Ասլետասի» 34-ամյա բասկետբոլիստ Տատաս Ստումբրիսը կորցրեց գիտակցությունը եւ վայր ընկավ: Մինչ շտապօգնության մեքենայի ժամանումը, թիմի բժիշկները արհեստական շնչառության եւ սրտի մերսման միջոցով փորձում էին նրան գիտակցության բերել, սակայն, ցավոք, նրանց ջանքերն անցան ապարդյուն:

Ստումբրիսը «Ժալգիրիսի» կազմում անցկացրել է 10 մրցաշրջան: «Սապորտայի գավաթը» նվաճելուց հետո նա տեղափոխվել էր Հունգարիա, այնուհետեւ խաղացել էր Ռուսաստանում, Իսրայելում, Գերմանիայում, Լեհաստանում եւ Պորտուգալիայում:

ՖՈՒՏԲՈԼԻ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ գրոհներ

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 24-րդ տուրն ավարտի ընկավ բարձր արդյունավետությամբ: Չորս հանդիպումներում խփվեց 19 գնդակ: Թվում է, թե այս փաստը պետք է ուրախություն պատճառի ֆուտբոլասերներին, որոնք գոլառատ հանդիպումների են ներկա գտնվել: Սակայն դա այդպես չէ: Ցավոք, բարձր արդյունավետությունը ոչ թե ֆուտբոլիստների վարպետության, նրանց գրագետ խաղի, այլ մրցակից թիմերի պաշտպանների կողմից սխալների հետեւանք է: Դրա վառ վկայությունը «Հանրապետական» մարզադաշտում «Փյունիկի» եւ «Շիրակի» միջեւ կայացած հանդիպումն էր, որին ներկա էր ընդամենը 300 հանդիսական: Դեռ ժամացույցի սլաքը չէր հասցրել մեկ լրիվ պտույտ կատարել, երբ «Փյունիկի» առաջին իսկ գրոհն ավարտվեց Գալուստ Պետրոսյանի գլխի դիպուկ հարվածով: 9-րդ րոպեին էդգար Մանուչարյանն անարգել խփեց 2-րդ գոլը: Ճիշտ է, ինչ հետո Բեռնեցյանը կրճատեց հաշվի տարբերությունը, սակայն մինչեւ 19-րդ րոպեն էդգար Մանուչարյանը եւս երկու անգամ հասավ հաջողության: Շիրակցի պաշտպաններն անփույթ էին գործում, սխալվում պարզ իրադրություններում, որի արդյունքում արդեն առաջին 20 րոպեներին խաղի ելքը վճռված էր: 2-րդ խաղակեսում Աղվան Մկրտչյանն ու Ալեքսանդր Պետրոսյանը հաշիվը դարձրին 6-1:

Մեծ հետաքրքրություն էր ներկայացնում «Կիլիկիա»-«Բանանց» հանդիպումը: «Կիլիկիան» պայքարում է բարձրագույն խմբում իր տեղը պահպանելու, իսկ «Բանանցը»՝ առաջնության պարգեւների համար: Խաղը բավական համառ ստացվեց: Դաշտի տերերի կազմում որակազրկման հետեւանքով բացակայում էր թիմի լավագույն ռմբարկու Նշան Երզրումյանը: Նրա բացակայությամբ իրեն հիանալի դրսեւորեց եղբայրը՝ Սերգեյը, որը դարձավ 2 գոլի հեղինակ: «Կիլիկիան» կարողացավ հաղթանակ տոնեց՝ մրցակցին պարտության մատնելով 3-2 հաշվով: «Կիլիկիայից» 3-րդ գոլի հեղինակը Կարեն Բարսեղյանն էր, որը խփեց ԺԺ առաջնություններում իր հոբելյանական՝ 50-րդ գնդակը: «Բանանցից» աչի ընկան Արսյոմ Պողոսյանին (11 մ հարվածով) եւ Արարատ Առաքելյանը:

«Կիլիկիայի» հաղթանակից հետո չափազանց սրվեց պայքարը բարձրագույն խմբում մնալու համար: Վտանգավոր գոտում գտնվող «Կոտայքը» «Միկայի» հետ խաղում շատ մոտ էր հաջողությանը, սակայն ձեռից բաց թողեց հաղթանակը: Աբովյանցիները 74-րդ րոպեին Գոռ Միրզախանյանի խփած գոլի շնորհիվ խաղը շահում էին, սակայն վերջին րոպեին Դավիթ Գրիգորյանը «Միկային» փրկեց պարտությունից:

3-րդ տեղի համար պայքարում զգալիորեն աճեցին «Արարատի» հնարավորությունները: Արարատցիները հերթական խոշոր հաշվով հաղթանակը տոնեցին՝ 4-1 հաշվով պարտության մատնելով «Դինամո-Զենիթին»: Արարատցիներից աչի ընկան լեգեոներները: Բաստեն Ուզուտերը 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը, մեկ գոլ էլ խփեց Գեորգի Սուվաբերիձեն: Սակայն առավել տպավորիչ էր Վահե Թադեւոսյանի հեռահար հուժկու հարվածով խփած 4-րդ գնդակը: Դինամոյականներից միակ գոլի հեղինակը Ալբերտ Ասֆյանն էր:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	22	19	3	0	72-20	60
2. Միկա	22	13	4	5	33-21	43
3. Բանանց	23	11	4	8	35-32	37
4. Արարատ	24	10	6	8	37-30	36
5. Դ.-Զենիթ	23	7	5	11	20-38	26
6. Շիրակ	24	4	7	13	24-43	19
7. Կոտայք	23	4	6	13	24-42	18
8. Կիլիկիա	23	4	4	15	26-45	16

Ռմբարկուները

էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	17
Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	16
Նշան Երզրումյան	«Կիլիկիա»	15
Լեւոն Փաչաջյան	«Փյունիկ»	12
Արմեն Շահգելդյան	«Միկա»	10

Առաջին մրցակիցը Թուրքիայի ընտրանին է

Այսօր Թուրքիայի հավաքականի հետ հանդիպումով Հայաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականը կսկսի Հոլանդիայում անցկացվող ֆուտբոլի Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարը: Ընտրական 9-րդ խմբում բացի Թուրքիայի ֆուտբոլիստներից, մեր պատանիների մրցակիցներն են Հոլանդիայի եւ Ուելսի հավաքականները: Հոկտեմբերի 21-ին մեր ընտրանին ուժերը կչափի տանտերերի, իսկ երկու օր անց՝ ուելսցիների հետ: Ընտրական 2-րդ փուլի ուղեգիր կստանան առաջին երկու տեղերը զբաղեցրած հավաքականները:

ՀՀ հավաքականը գլխավորում է Արմեն Գյուլբուդաղյանցը, որը մարզում է «Փյունիկ-3»-ը: Հենց այս թիմի ֆուտբոլիստներն էլ կազմում են պատանեկան հավաքականի կորիզը: Հարկ է նշել, որ մեր հավաքականն արդեն միջազգային հանդիպումների որոշակի փորձ ունի: Վերջերս թիմը բավական հաջող մրցելույթներ էր ունեցել Լիտվայում կայացած միջազգային մրցաշարում: Մինչ Հոլանդիա մեկնելը հավաքականն ուսումնամարզական հավաք էր անցկացրել Արարատի «Այգ» մարզավանում: Թիմի առջեւ խնդիր է դրվել հաղթահարել առաջին փուլի արգելքը: Հիշեցնենք, որ անցյալ տարի էլ մեր մինչեւ 17 տարեկանների հավաքականը Խորեն Հովհաննիսյանի եւ Սամվել Պետրոսյանի գլխավորությամբ հաջողությամբ էր հաղթահարել ընտրական մրցաշարի առաջին փուլը:

Ռուսական թենիսի հերթական հաջողությունը

Ռուսական թենիսի ներկայացուցիչների փայլուն հաղթանակով ավարտվեց «Կրեմլի» գավաթի 15-րդ խաղարկությունը: Բոլոր չորս մրցաձեւում էլ ուժեղագույն ճանաչվեցին ռուսաստանցի թենիսիստները: Տղամարդկանց մրցաշարում լավագույնը Նիկոլայ Դավիդենկոն էր, որը եզրափակիչում պարտության մատնեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Գրեգ Ռուսեդսկուն (3-6, 6-3, 7-5): Հանդիպումը բավական համառ բնույթ կրեց եւ տեւեց մոտ 3 ժամ: Նիկոլայ Դավիդենկոն առաջին անգամ դարձավ «Կրեմլի գավաթի» հաղթող: Նախորդ խաղարկություններում ռուս թենիսիստներից 5 անգամ հաղթող էր ճանաչվել Եվգենի Կաֆելնիկովը, 2 անգամ՝ Անդրեյ Չերկասովը, մեկ անգամ էլ հաջողությունն ուղեկցել էր Ալեքսանդր Վոլկովին: Ընթացիկ մրցաշրջանում Դավիդենկոն իր 2-րդ մրցաշարը շահեց, որը 4-ն էր նրա մարզական կենսագրությունում: Դավիդենկոն ուժեղագույնն էր նաեւ զուգախաղում: Ընկերակցելով Իգոր Անդրեեւին, ռուսական զույգը հաղթեց Մահեշ Բհուպաթի-Յոնաս Բյորկման երկյակին (3-6, 6-3, 6-4):

Կանանց մրցաոյարում իրեն գերազանց դրսեւորեց ռուսաստանցի Անաստասիա Միսկինան, որը վճռորոշ խաղում պարտության մատնեց իր հայրենակցուհի Ելենա Դեմենտեւային (7-5, 6-0): Միսկինան 2-րդ տարին անընդմեջ ուժեղագույնն է ճանաչվում «Կրեմլի գավաթի» մրցաոյարում: Նա մարզական իր կենսագրությունում 9-րդ տիտղոսը նվաճեց, իսկ ընթացիկ մրցաշրջանում արդեն 3-րդ անգամ է հաղթող ճանաչվում: Միսկինան էլ Մոսկվայում հաջողության հասավ նաեւ զուգախաղում, որտեղ Վերա Զվոնարյովայի հետ պարտության մատնեց Վիրջինիա Ռուանո Պասկուալ-Պաոլա Սուարես զույգին (6-3, 4-6, 6-2):

էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Ֆրանսիական ռադիոալիքը՝ թուրքական քարոզչության խոսափող

Փարիզի շրջանում բնակվող դոկտոր Կլոդ Ադամյանը, որը բանաստեղծ Սիամանթոյի քրոջ թոռն է, օրերս բաց նամակ է հղել «France Culture» ռադիոալիքի ծրագրերի տնօրեն տկն Լոր Ադլերին: Նամակում մասնավորապես նշվում է, որ հոկտեմբերի 6-ին նախորդած շաբաթվա ծրագրերը հիմք են տալիս մտնելու, որ ֆրանսիական մշակութային գլխավոր ռադիոալիքը վերածվել է թուրքական քարոզչության խոսափողի:

Ռադիոալիքը 3 ժամանոց 5 դասախոսություններից կազմված հատուկ հաղորդաշարի ընթացքում ունկնդիրներին հորդորում էր թողնել, որ թվացյալ ժողովրդավարական երկիր Թուրքիան՝ այդ նոր Տրյական ձին, մուտք գործի Եվրոմիություն:

Հաղորդաշարը վարում էր Փարիզի «Քոլեժ դը Ֆրանս» ուսումնական հաստատության թուրքական եւ օսմանյան պատմության ամբիոնի վարիչ Ժիլ Վենսքենը (կամ Վայնբայնը): Թեման կոչվում էր «Օսմանյան կայսրության եւ Եվրոպայի հարաբերությունների հարցը»:

Նամակագիրը հիշեցնում է, որ Հայոց ցեղասպանության հարցում իր ժխտողական կեցվածքի պատճառով Ժիլ Վենսքենը 1998 թ. մեծ դժվարությամբ էր ընտրվել հիշյալ ամբիոնի վարիչի պաշտոնում: Ֆրանսիական ռադիոալիքի եթերում նա միեւնույն թուրամետ դիրքերից օրեր շարունակ ներկայացրեց Արեւելյան Եվրոպայի թուրքական նվաճման մանրամասն պատմությունը:

Բայց, ըստ նամակագրի, առավել ցավալի է եղել հաղորդավարուհու պահվածքը, որը յուրաքանչյուր դասախոսությունից առաջ յուրովի վերլուծել է դրա «փիլիսոփայական իմաստը», իսկ Ժիլ Վենսքենին ներկայացրել է որպես մասնագետ պատմաբանի, որն առաջարկում է վերանայել անցյալի իրադարձությունները:

Մասնավորապես սեպտեմբերի 29-ին հաղորդավարուհին հայտարարել է. «Վերջին դասախոսության ընթացքում առաջացվեց, որ թուրքերն ու եվրոպացիները երկու առանձին միավորներ չեն»: Այսինքն՝ զավթիչները եւ նվաճված ժողովուրդները չափվում են նույն արշինով: Պատմության վերանայման որպիսի՞ փայլուն օրինակ:

Մինչդեռ հայտնի է, որ թուրքական նվաճումների հինգդարյա մղձավանջը եվրոպացիներն անվանում են «Օսմանյան գիշեր»: Ի դեպ, Վենսքենը եւս օգտագործում է տվյալ բնորոշումը: Կլոդ Ադամյանը շեշտում է, որ հայ ժողովուրդը լիուլի «ճաշակել» է օսմանյան թուրքերի բերած «խաղաղությունը»՝ կորցնելով իր պատմական տարածքի 90 տոկոսը եւ տալով միլիոնավոր զոհեր:

Բաց նամակում խոսվում է նաեւ Ֆրանսիայում հայտնի քաղաքագետ Ալեքսանդր Ադլերի հաղորդումների մասին, որն աչառու է դառնում, հենց որ խոսք է բացվում Թուրքիայի մասին: Ինքը՝ Ադլերը, ամիսներ առաջ կայացած հեռուստաբանավեճերից մեկի ժամանակ խոստովանել է, որ իր հարազատներից (կամ մերձավորներից) մի քանիսը երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստներից փախչելով ապաստան են գտել Թուրքիայում:

Բայց դա արդյոք բավարար պատճառ է, որպեսզի Ադլերը կորցնի ողջամտությունը եւ ոճրագործների վերաբերյալ հայտարարի. «Չպետք է մոռանալ, որ միայն լավ արարքներով հայտնի երիտթուրքերի կարգախոսն էր՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն»:

Նույն տրամաբանությամբ կարելի է հայտարարել. «Չպետք է մոռանալ, որ միայն լավ արարքներով հայտնի նացիստներն Օսվենցիմի մուտքի մոտ փակցրել էին «Աշխատանքն ազատագրում է» կարգախոսը»:

Ի դեպ, Թուրքիայի երեսկան օրենսգրքի 306-րդ հոդվածը 10 տարվա բանտարկություն է նախատեսում «այն քաղաքացիների համար, ովքեր կհայտարարեն, որ իրոք Հայոց ցեղասպանություն է եղել Առաջին աշխարհամարտի ժամանակ»: Նամակագիրը մեջբերում է «Աշխարհի բժիշկներ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության վերջին հաշվետվության այն մասը, որ վերջին 80 տարում Թուրքիայում բռնարարքներն անդադար հալածվում են, քանզի Փոքր Ասիայում բնաջնջման ենթակա քրիստոնյաներ այլեւս չկան:

Պ. Ք.

Գ. Պոպով. «Ղարաբաղն Ադրբեջանին է տվել Ստալինը»

ՄՈՍԿՎԱ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոսկվայի նախկին քաղաքապետ, տեղի միջազգային համալսարանի նախագահ Գավրիլ Պոպովը «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթում հրապարակած հոդվածում, անդրադառնալով ազգերի ինքնորոշման հարցում բոլշեւիկյան քաղաքականությանը, մասնավորապես նշել է, որ Մոսկվան օգտագործել է ազգամիջյան կոնֆլիկտները: Սահմանները գծել է Ստալինը, որ լավ գիտեր ազգային կոնֆլիկտային վիճակը. Աբխազիայի սահմանը գծելիս, նրանում ընդգրկել է վրացական շրջաններ, հայկական Ղարաբաղը տվել է Ադրբեջանին:

«Հաշվել ու համոզվել եմ, որ առնվազն 10 շրջանում Ստալինը ստեղծել է պայթյունավտանգ կացություն՝ ազգամիջյան կոնֆլիկտ հրահրելու եւ Մոսկվայի միջամտության առիթ ստեղծելու համար», գրել է Պոպովը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հոկտեմբերի 8-14-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան նվազել է 1 մլրդ 755 մլն դրամով եւ հոկտեմբերի 14-ին կազմել 114 մլրդ 884 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաբնորոշման միջոցների) նվազել են 959 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 796 մլն դրամով:

Հոկտեմբերի 1-8-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 725 մլն դրամով եւ հոկտեմբերի 8-ին կազմել 251 մլրդ 335 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 2 մլրդ 592 մլն դրամով, կազմելով 90 մլրդ 765 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 1 մլրդ 214 մլն դրամով եւ կազմել 29 մլրդ 21 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 93 մլն դրամով եւ կազմել 9 մլրդ 72 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 2 մլրդ 10 մլն դրամով եւ կազմել 122 մլրդ 477 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 60 մլրդ 331 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 1 մլրդ 971 մլն դրամով), ժամկետայինները՝ 62 մլրդ 146 մլն դրամ (նվազումը՝ 39 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հոկտեմբերի 8-14-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել է 500 մլն դրամի 11-շաբաթյա ՊՊ՝ 4,0225 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, եւ մարվել 600 մլն դրամի 52-շաբաթյա ՊՊ՝ 10,0924 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Նշված ժամանակահատվածում ԿԲ-ն իրականացրել է 30 օր տեւողությամբ արտարժույթի տրամադրման սվոպ՝ 3 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով՝ 2,13 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ մարել արտարժույթի տրամադրման սվոպ՝ 3 մլն 800 հազ ԱՄՆ դոլարի՝ 2,16 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հոկտեմբերի 8-14-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեզրկվել է 0,06 տոկոսով՝ 506,55 դրամից հասնելով 506,87 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 38,007 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 505,56 դրամ:

՝՝ ԿԲ մամուլի ծառայություն

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝
ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ
«ՌԱԴԻՈԼՈՒՐ»
լրատվական-վերլուծական ծրագիր
ամեն օր՝ ուղիղ եթերում
ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն),17.00, 18.00, 22.00, 23.00
Օդերևութաբանություն՝
On-line ռեժիմով
www.armradio.am

ՀՀ Կենտրոնական բանկը 19.10.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	506.96	501.90	512.00
EUR	1	ԵՎՐՈ	632.38	628.60	636.20
RUR	1	Ռուս. ռուբլի	17.41	16.40	18.50

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2004 թ. հունիսի 3-ի N1288-Ն որոշմամբ «Ծաղկաձորի էին. վերանորոգման վաղորդյուն» ՓԲԸ-ի ոչեսական սեփականություն հանդիսացող բաժնեմասերն ուղղակի վաճառքի ձեւով աճուրդային կոնկուրսի մասնակցելու նպատակով նոյեմբերի 23-ին, ժամը 12:00-ին (հասցեն՝ 1. Ծաղկաձոր, տպրոհամարքի տարածք) հրավիրվում է կոնկուրսի անդամների ժողով:

Խնդրում ենք «Ոչեսական գույքի մասնավորեցման մասին» օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան, կոնկուրսի անդամ հանդիսացող բոլոր անձանց մինչեւ նոյեմբերի 18-ը, ժամը 17:00 դրանցվել ընկերությունում բացված կոնկուրսի անդամ հանդիսացող անձանց գրանցամատյանում:

Օրակարգ 1. Ոչեսական սեփականություն հանդիսացող բաժնեմասերն առաջարկված գնով գնելու հարց
2. Նախաձեռնող խմբի ընտրություն
3. Բաժնեմասերի բաշխում աճուրդային կոնկուրսի անդամների միջեւ:

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հաշվառմամբ մշակվում է Երեւան խաղաղում գործող «Հոլնանյան ինստիտուտ» ՍՊԸ-ն «Վաղուն թույլատրագրերի նախագիծ:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

PROFAL LLC
«ՊՐՈՖ ԱԼ» ՍՊԸ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՐՓՐԱՊԼԱՍՏ
(պենոպլաստ)
ՅԱՆԿԱՑԱԾ ՉԱՓԵՐԻ ԽՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ
մանրամասներն՝
հեռ. /374 1/ 398 711, 544 296

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ

ԱՃՈՒՐԴԻ են հանվում ամերիկյան կահույք, էլեկտրասարքեր, մեքենաներ եւ գեներատորներ (միաֆազ եւ եռաֆազ): Աճուրդային վաճառքը կկայանա ***հոկտեմբերի 23-ին եւ 24-ին ժամը 10:00-ից մինչեւ 16:00*** կամ էլ մինչեւ ապրանքների ամբողջական իրացումը ԱՄՆ դեսպանատան Արարատյան 90 հասցեում գտնվող պահեստում (մուտքը Շահուրի փողոցի կողմից, որը հայտնի նաեւ որպես Շահվերդյան փողոց): Ապրանքը զննելու համար կարող եք գալ ուրբաթ օրը, հոկտեմբերի 22-ին ժամը 16:00-ից մինչեւ 20:00: Եկեք, տեսեք, գրանցվեք, իսկ շաբաթ եւ կիրակի օրերին համեցեք գնուՀոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (***ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում):*** Տեղում կվաճառվեն զովացուցիչ ըմպելիքներ ու ուտեստներ:

Այն ֆիզիկական անձինք, ովքեր մախսային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մախսային վճարումների հետ կապված հարցերը:

Ուշադրություն. կիրառվելու է աճուրդային վաճառքի նոր ձեւ, որը թույլ կտա գնել միայն մի բան: Եթե ուզում եք գնել մեկ հատ աթոռ, ապա ԳՆԵՔ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱԹՈՌ: Եթե ուզում եք գնել մեկ հատ սառնարան, ապա ԳՆԵՔ ՄԻԱՅՆ ՄԵԿ ՍԱՌՆԱՐԱՆ: Այս աճուրդը մեծածախ վաճառք չէ:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել ԱՄՆ դեսպանատուն Ռոբերտ Քրոմին, Սվետլանա Հարթին կամ Արաքսե Ցոմոյանին հետեւյալ հեռախոսահամարներով. **527001, 524840, 524872:**